№ 165 ԵՐԵՔՇԱԲԹԻ 30 ՅՈՒԼԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ 30 ՅՈՒԼԻՍԻ № 165

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ) —20 կ., IV երեսի վրա—10 կոպ.
Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и Ко, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.
1913 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետևեալ 2 գրքերը. 1) «Մշակ» և հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակ»։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆԸ
ԵՒ
ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶԸ
(Հիմնարկված 1886 թ.)

ՓՈԽԱԴՐՎԱԾ ԵՆ աւելի ընդարձակ շէնութիւն, որ կառուցված է յատկապէս ուսումնարանական հիմնարկութեան համար—Վելիկօկնեաժեսկայա փողոց, № 109, սեփ. տուն (Կրիլօվսկայա փողոցից՝ 3-րդ տունը)։
Երկսեռ երեխաների ընդունելութիւն՝ 3—13 տարեկան։
Երեխաները պատրաստվում են պետական բոլոր դպրոցները մտնելու համար։
Յիշեալ հիմնարկութեան նպատակն է՝ երեխայի մտաւոր բոլոր ուժի հարմօնիական զարգացումը, դաստիարակչական լայն խնդիրներ և ֆիզիկական հարկաւոր զարգացում։ Շինութեան կից կան՝ ընդարձակ այգի, ուր երեխաները աշխատում են փորձառու ղեկավարի հսկողութեամբ, գրադարան-ընթերցարան, ձեռնարուեստի դասարան։
Ամէն օր շարժական խաղեր և երգեր՝ մարմնամարզութեամբ հանդերձ—դաստառուների հսկողութեամբ։
Մանկական-Պարտէզի պարապմունքներով և շարժական խաղերով հետաքրքրվողները կարող են այցելել երեքշաբթի և հինգշաբթի օրերը՝ առաւօտեան ժամը 10—12-ը։
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՕԳՈՍՏՈՍԻ 15-ԻՑ.
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-ԻՑ.
(հ.) առ. 598. 5—1

Պատիւ ունենք յայտարարելու, որ „ՌԵԿՏԻՖԻԿԱՏ" ընկերակցութեան ԳՐԱՍԵՆԵԱԿԸ և ԳՈՐԾԱՐԱՆԸ, ներկայումս „Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ" ֆիրմայի տակ գործող, որոնք գտնվում են Չերբէզօվսկայա փողոցում (Նախկին Աւճալսկայա),
ՓՈԽԱԴՐՎՈՒՄ ԵՆ ՆՈՐ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՆՈՅՆ ՓՈՂՈՑՈՒՄ՝ ՏՈՒՆ ԵՂԻԱԶԱՐՕՎԻ № 65.
Խորին յարգանքով
«ՌԷԿՏԻՖԻԿԱՏ» ԸՆԿ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
(հ.) առ. 599. 2—2

ԱՐԱՄԱԶԴ ԸՆԿ. ՆՊԱՍՏՈՎ պահվող ԶԱՆԳԵԶՈՒՐ գաւառի ՂԱՓԱՆԻ և ՄԵՂՐԻԻ շրջանի ԳԻՒՂԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ համար հարկաւոր են միջնակարգ կրթութիւն ունեցող ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ։ Ցանկացողները մանրամասն պայմանների մասին թող դիմեն ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍԻ 20-ը հետևեալ հասցէով. Баку, Телефонная, А. Г. Вачьянцу—Ուսումնարանական Յանձնաժողովին։
(օ.մ.) առ. 594. 3—2

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ

Թիւրքահայերու արդի դրութիւնը

I

Բիթլիս, 16 յուլիս

Թղթակցութիւնս անդրանիկն ըլլալով նախ ըսեմ, թէ ընթերցողները պէտք է գիտնան, որ Թիւրքահայաստանէն և մանաւանդ այս շրջաններէն թերթերուն ղրկուած գրութիւններն ոչ թէ քաղաքակրթական, կուլտուրական և տնտեսական նոր յառաջդիմութեան մը լուրերը կը պարունակեն, այլ ընդհակառակն յետադիմութեան, ամէն օր տեղի ունեցած մասնակի և խըմբական ջարդերու, կողոպուտներու, առևանգութեանց, արտագաղթի և այսր նման տխուր և բացառապէս իրական տեղեկութիւններու կը վերաբերին։

Այս երկիրներու մէջն ընդհանրապէս դէպքերը կը սկսին ապրիլի կէսէն և կը տևեն մինչև նոյեմբերի վերջերը. ձմեռուան մէջը պատահածները քիչ են, և ճիշդ այդ պատճառաւ է, կարծեմ, որ տեղացիներն իրենք զիրենք զերծ զգալով քիւրդական յարձակումներէն՝ նախնիքներէ մնացած սովորութեան համաձայն՝ ամուսնութիւնները, հացկերոյթները և կերուխումներն այս եղանակին կընեն։

Այս տարի գարունէն մինչև հիմա ամբողջ Բիթլիսի կուսակալութեան մէջն եղած սպանութիւններն ու կողոպուտները կը հաւասարին անցած 1908-ի կէսէն մինչև 1912-ին մէջ եղածներուն։ Ես կը կարծեմ, թէ պատճառներն են նախ բալկանեան պատերազմը՝ յորում Թիւրքերու պարտումը քրիստոնեայ ազգերէն յուզած է քիւրդին, խալամ տարբին կրօնամոլական զգացումները. երկրորդ՝ հայ պատգամաւորութեան եւրոպական կառավարութեանց մօտ ըրած դիմումն և խնդրած օտար միջամտութիւնը, բանի մը՝ զոր Պոլսոյ Թիւրք թերթերը խեղաթիւրելով հասկցուցին նախ քիչ կարդալ գիտցող դասակարգին և վերջնոյս միջոցաւ անուս քիւրդին ու իսլամին. և ես վստահ եմ, թէ այդ մասնակի ջարդերը մասսայական պիտի դառնային, եթէ երբեք ռուս կառավարութիւնն ու մամուլը դադրէին յայտնելէ իրենց համակրանքն ու պաշտպանութիւնն հանդէպ հայկական դատին։

Այսպէս՝ գարունէն մինչև հիմա դէպքերն անպակաս եղած են. շաբաթ չանցնիր, որ 4—8 սպանութիւններ, կողոպուտներ ու առևանգումներ չըլլան։ Վերջին եօթնեակիս մէջը քիւրդերն սպաններ են՝ ա) 20 տարեկան Պզտէ անունով հայ մը՝ Խիզանի Անապատ գիւղը, բ) 14 տարեկան հայ տղայ մը՝ Աբրէն՝ ևս Խիզանի Նորշէն գիւղը, գ) հայ ուսուցիչ մը՝ Ախլաթի Թեղուտ գիւղէն աղին դաշտին մէջը, դ) չափահաս հայ մը՝ Գիւզէլ-դէրէին Կարփ գիւղէն։ Առաջին երկու սպանութիւններն եղած են առանց ոևէ պատճառի. երրորդն ալ գործուած է Մշոյ դաշտի յայտնի ոճրագործ Մուսա-բէյի մարդկանց կողմէն, որոնք ի լրացումն իրենց վայրագութեան կտրած էին խեղճին ականջները, քաշեր էին ականները՝ երբ դեռ ողջ էր. ոճրագործներուն նպատակն եղած է ուսուցիչն սպաննել անոր կրած նոր հագուստն ու ժամացոյցը խլելու համար, ինչպէս ալ ըրած էին։ Գիւզէլ-դէրէի Կարփի ոճրագործն ալ Երանի Մէհմէտ Էմին բռնած է, որ մայիս 1-էն ի վեր սպաններ էր՝ Երանի Գնձու գիւղի քահանան՝ տէր-Գորգիսը, առևանգած է զինուոր Երամոսի կինը, ծանրապէս վիրաւորած է հայ ոստիկան մը, և այս անգամ ալ յիշեալ գիւղին հովին առևանգելով լեռը տարած էր, զոր խոստացած էր յետ վերադարձնել 40 լիրայի փրկանքի մը փոխարէն. մինչ գիւղացիք հանգանակութեամբ ձեռք բերած փրկանքը հրէշին տանելու կը պատրաստուէին, անդին հայուն գլուխը կտրած կը բերուի և գիւղը կը նետուի։ Լսեցի, թէ ուրիշ քիւրդ խմբակ մըն ալ Խիզանի Խարևտ գիւղէն 4 հայ առևանգեր ու լեռ տարեր է։

Անօգուտ չեմ տեսներ ըսելու, թէ հանդէպ այդ քիւրդական բարբարոսութեանց օրուան իթթիհադական կառավարութիւնն այն է, ինչ որ էր սուլթան Համիդի և Քեամիլ-փաշայի օրերուն։

Ներկայ կառավարութիւնը նախկիններէն յատկանշուն այն է, որ ասոնք կը ջանան սպանութիւնները գաղտնի գործել, սպաննուածներու դիակները պահել, իսկ երբ անոնք մէջտեղ ելլեն, կը փորձեն ոճիրը հայոց վերագրել. իսկ երբ ատոր ալ չյաջողին, քանի մը ժանդարմաներ կը ղրկեն ոճրի վայրը, հրահանգելով զանոնք որ չբռնեն, չգտնեն ոճրագործն, եթէ նոյնիսկ տեսնեն։ Դեռ ամիս մը առաջ էր, որ արձակուրդով Վանէն Մուշ մեկնող 2 հայ զինուորները Բիթլիսի կից Թուխի անտառակին մէջն Անկասարի քիւրդերէն կը սպաննուին և դիակները կանհետացուին։

Յայտնի կերպով Ճըկոսի քիւրդերէն սպաննուած պորեցի Յարգենի, և քաղքիս մէջը Թիւրքէ մը սպաննուող Մուգատարի սպանութիւնները կառավարութեան կողմէ հայերուն վերագրուելով 9 հայեր դեռ բանտին մէջը կը մնան։ Իսկ ինչ կը վերաբերի ոճրագործը հետապնդելու համար ժանդարմաներուն տրուած նենգամիտ հրամանով, որ երբ սպաննողն իսլամ է, մարդասպան քիւրդն անմիջապէս կը բռնուի, իսկ երբ հայ ըլլայ՝ անձեռնմխելի կը մնայ։ Թողունք որ երբեմն ղրկուած ոստիկաններուն հետ ընկերացող հայ ժանդարմաներն իսկ կը հաստատեն այդ իրողութիւնը։

Մշեցի

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

Կիսկիմ (Էրզրումի վիլայէթ), 24 յուլիս

Այս կողմերը գողութիւն, մարդասպանութիւն, թալանումն, հրկիզումն, քանդումն սովորական բաներ են։ Բայց բռնաբարութիւն դեռ տեսնուած չէր։ Եւ ահա անցեալ տարի այդ նորութիւնն ալ սկսաւ։

Խոտորջրոյ մէկ ամարանոցին մէջ եկան և մինչև լոյս ամէն տեսակ լրբութիւններ ըրին։ Զոհերը մինչև Էրզրում ղրկեցինք, դատարանի, փաստաբանի յանձնեցինք։ Մեղաւորներն իբրև թէ պիտի պատժուէին։ Հիմա այդ կարգի սրիկայական խումբերը բազմացեր են մեր կողմերը և, գինուած, գիշատիչ գայլերու պէս, անտէր, անհովիւ ոչխարներ տեսածնուն պէս կը բզկտեն։

Անցեալ շաբաթ Կարմրիկ գիւղի մօտ ջաղաց մը կը մտնեն վեց լաճեր։ Մէկ մարդ և երեք կին կան եղեր հոն։ Մարդը կը կապեն և անոր կինը կը բռնաբարեն իր աչքին առջև։ Նոյնպէս կը վարուին և միւս կանանց հետ։ Սրիկաներու այդ խումբը չպատմուելիք լրբութիւններու, գազանութիւններու կենթարկէ խեղճ կիները։ Կիներէն մէկը կը մեռնի։ Այդ մարդգազանները կըսեն, թէ «պատրաստուեցէք. այսուհետև միշտ այս է ձեր տեսնելիքը»։

Ուրիշ խումբ մը՝ անցորդները, ճամբորդները կը կողոպտէ։ Այս խումբն ալ մտած է հայու մը ջաղացը, 500 ոսկի ուզած է։ Ո՞ւսկից տալ ջաղացպանը։ Անոր տղան կը սպաննեն, կինը կը տանին և կըսեն.

— Դրամը բեր, որ տանիս կինդ։

Մարդը կը դիմադրէ։ Եւ այդ դիմադրութեան որպէս պատիժ՝ կը խեղդեն զայն և ջաղացը կը հրդեհեն։ Կինը յայտնի չէ թէ ո՞ւր տարին, ի՞նչ ըրին։ Յարութիւն աղայի (Խոտորջուրցի) դիակը մէջտեղ ելաւ, հագուստներն անգամ բռնուեցան, զարնողը յայտնի կեցած է և ազատ կը շրջի...

Ջէյրան

ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ ՆԱՄԱԿԸ

(Տպված «L'Homme Libre» թերթում)

Պարիզ, 20 յուլիս

Պարոն խմբագրապետ,

Երէկուան «L'Homme Libre»-ի մէջ կարդացի Կ. Պոլսէն հեռագիր մը, որ կը ծանուցանէ, թէ դեսպանները, որոնց պաշտօն յանձնուած է մշակել հայկական նահանգներուն համար բարենորոգումներու վերջնական ծրագիր մը, ստացած են Բ. Դրան կողմէ պատրաստուած ծրագիր մը՝ իրենց խորհրդակցութեանց հիմ ծառայեցնելու համար։

Ասիկա սկզբունքի խնդիր մը կը յարուցանէ, որուն մասին երախտապարտ պիտի կացուցանէք զիս, թոյլ տալով որ ձեր թերթին մէջ հակիրճ կերպով պարզեմ հայկական պատուիրակութեան կարծիքները։ Արդարև, մեր կարծիքով, այսօր բարենորոգումներու ամէն տեսակ բանաւոր և օրինական միակ հիմը տէրութեանց համար կրնայ ըլլալ միայն 1895-ի ծրագիրը, որ իրենց գործն է։ Նոյն իսկ խնդիր չէր կրնար ըլլալ զայն վերաքննութեան ենթարկելու, եթէ անոր խմբագրութենէն ի վեր՝ 18 տարիներ անցած չըլլային և անկէ ետք տեղի ունեցած ռեժիմի փոփոխութիւնը, ինչպէս նաև բարենորոգումի խնդիրներուն մէջ անկէ ի վեր ձեռք բերուած փորձառութիւնը անհրաժեշտ չդարձնէին ճըշդում մը։

Բայց այս միակ վերապահումներով 1895 [illegible] դադրեցայ զայն յայտարարել, երբև հիմ ծառայէ այն վերջնական բնագրին, զոր խմբագրելու պաշտօն ունին դեսպանները։ Եւ ճիշդ այդ պատճառաւ է, որ պատուիրակութիւնը ետ կեցած է նոյնպէս ծրագիր մը ներկայացնելէ, հաւատալով որ միմիայն տէրութիւններուն կը վերաբերի սրբագրել և փոփոխել այն ծրագիրը, որ արդէն մշակուած է իրենց կողմէ և իր խոշոր գիծերուն մէջ ընդունուած է Բ. Դրան կողմէ։ Ու արդէն այսպէս կը թուի եղած ըլլալ դիտաւորութիւնը եւրոպական կառավարութիւններուն, որոնք որոշած են հետևիլ միևնոյն գործելակերպին, որուն հետևեցան 1895-ին՝ պաշտօն տալով Կ. Պոլսոյ իրենց [illegible] քան տրամաբանական է, որ թոյլ կուտայ խուսափիլ այն ամէն սկզբունքային անհամաձայնութիւններէն, որոնք կրնան տեղի ունենալ վերջնական ծրագիրը խմբագրողներուն միջև, քանի որ ասոնք ստիպուած են վերջապէս ներկայ պարագաներուն միայն յարմարեցնել տէրութիւններէն իսկ բղխած աշխատութիւն մը։

Այս պատճառով էր որ «L'Homme Libre»-ի անցեալ յունիս 20-ի թուին մէջ հրատարակած նամակիս մէջ կըսէի, թէ կը կարծէի կարենալ վստահեցնել, որ մեր պահանջները օսմանեան կառավարութեան կարծիքներէն բաժնող միակ կարևոր կէտը կոնտրոլի խնդիրն էր, և թէ յոյս ունէի, որ Բ. Դուռը չպիտի ուշանար խոստովանելու անոր անհրաժեշտութիւնը։ Այսօր ալ կը յուսամ, որ չեմ խաբուիր, և վստահութեամբ կը սպասեմ Կ. Պոլսոյ մէջ այժմ տեղի ունեցող բանակցութիւններուն ելքին։

Պէտք կա՞յ յիշելու, թէ հայերը չեն որ շահագրգռուած են հայկական բարենորոգումներու իրագործումով, թէ ամբողջ կայսրութեան լաւ ըմբռնուած շահը սերտ կերպով անոր կապուած է, ինչպէս նաև շահը այն տէրութեանց, որոնք բոլորն ալ իրենց քաղաքական ծրագիրին գլուխը արձանագրեցին Թիւրքիոյ հողային ամբողջականութեան պահպանումը։

Եթէ թերթերու տուած տեղեկութիւնները ճիշդ են, թէ դեսպանները կուսումնասիրեն իրենցմէ մէկուն կողմէ ներկայացուած ծրագիր մը, որ ճշգիւ խմբագրուած է այս իմաստով և կը բղխի 1895-ի ծրագիրէն, ուրեմն բնական կը թուի զայն իբրև հիմ ընդունիլ խորհրդակցութեանց։ Գալով Բ. Դրան ծրագրին, չեմ գիտեր թէ ո՞րն է անոր ընդհանուր ուղղութիւնը, որովհետև ոևէ գրութիւն ստացած չեմ այդ փաստաթուղթի մասին. և թերևս աւելորդ չըլլար ցաւով աւելցնել, թէ բարենորոգումներու մասին տեղի ունեցած չէ ո՛չ իրաւախոհութիւն մը և ո՛չ ալ ոևէ համաձայնութիւն կառավարութեան և պատուիրակութեան միջև։ Թէ Կ. Պոլսոյ թերթերէն մեր ստացած տեղեկութիւններէն և թէ մասնաւոր [illegible] կառավարութիւնը այսօր գիտակից ըլլալով այս հարցի կենսական կարևորութեան և Հայաստանի մէջ բարենորոգումները իրագործելու ստիպողականութեան՝ տրամադիր է ընդունելու մեր համեստ պահանջներու մեծագոյն մասը։

Եթէ ամբողջապէս զուգընթաց շահերու այս նկատումները մօտեցնենք Ասիոյ իմ հայրենակիցներու պահանջներու չափաւորութեանը, որոնց երկու գլխաւոր կէտերը կը կայանան եւրոպացի ընդհանուր կառավարչի մը անուանումին, որ տեղի պիտի ունենայ սուլթանին կողմէն և տէրութեանց հաւանութեամբ, ու կոնտրոլի մը հաստատումին մէջ, որ երաշխաւորէ բարենորո- [illegible] արդարանայ մեր վստահութիւնը Եւրոպայի օժանդակութեան և Բ. Դրան քաղաքական ոգիին վերաբերմամբ։ Ուրեմն կարելի է վստահ ըլլալ, թէ դեսպանները չպիտի ուշանան գտնելու համաձայնութեան գետին մը և թէ անոնք պիտի յանգին Բ. Դրան հետ համաձայնութեան մը, որպէսզի վերջինս բարենորոգումներու գործադրումով մը ըստեղծէ հայկական նահանգներու մէջ ապահովութեան և արդարութեան ռէժիմ մը որ թոյլ տայ ամբողջ ժողովուրդին, առանց ցեղի և կրօնի խտրութեան, թէ իսլամին և թէ քրիստոնեային, ապրիլ խաղաղութեան մէջ և յառաջդիմել տնտեսապէս կայսրութեան բարիքին համար։

Ընդունեցէք, պարոն խմբագրապետ, ջերմ շնորհակալութեանցս հետ ամենախոնարհ յարգանացս հաւաստիքը։

(«Մեղու») Պօղոս Նուպար

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

27 և 28 յուլիսի

Բուխարեստ.—Ժամը 11-ին Թնդանօթային 21 զարկեր աւետեցին հաշտութեան դաշնագիրը ստորագրելու մասին։ Դաշնագիրը ստորագրելուց յետոյ նոյն նիստում Վենիզելօսը շնորհակալութիւն յայտնեց Մայորեսկուին կոնֆերենցիայի անունից։ Կարլոս Թագաւորը շքանշաններ նուիրեց կոնֆերենցիայի անդամներին։ Բուլգարական պատգամաւորները ցանկութիւն յայտնեցին, որ շքանշանները իրանց տրվեն Ռումինիայի և Բուլգարիայի միջև դիպլոմատիական յարաբերութիւնները վերանորոգվելուց և սերտ վերաբերմունք ստեղծվելուց յետոյ։ Խաղաղութիւնը վերականգնվելու համար հանդիսաւոր մաղթանքներ են կատարվում։ Եկեղեցիների զանգերի ղօղանջիւնը աւետում է ազգաբնակութեանը։ Քաղաքը զարդարվել է դրօշակներով. ամենուրեք նուագում է երաժշտութիւնը։

Բուխարեստ.—Հաշտութիւն կնքելու առիթով հանդիսաւոր պատարագ տեղի ունեցաւ, որին ներկայ էր Թագաւորը, կոնֆերէնցիայի անդամները, մինիստրները և այլն։ Սպալայկովիչի առաջարկութեամբ բոլոր պատգամաւորները ամբողջ կազմով գնացին պալատը և ստորագրեցին Թագաւորի մօտ։

Կոնֆերէնցիայում ստորագրված դաշնագիրը սկսվում է այն որոշումով, որ վերականգնվում է հաշտութիւնը և բարեկամական յարաբերութիւնը Բուլգարիայի, Յունաստանի, Չերնոգորիայի, Ռումինիայի և Սերբիայի Թագաւորների միջև։

Բուխարեստ.—Մայորեսկուն արտաքին գործերի մինիստրութեան շէնքում հանդիսաւոր ճաշկերոյթ տուեց խաղաղարար պատգամաւորներին։ Ճաշկերոյթին Մայորեսկուն կենաց բաժակ առաջարկելով, ասաց, որ խաղաղարար կոնֆերէնցիան կատարեց իր պարտքը։ «Շուտ համաձայնութեան գալը և հայեացքների միանմանութիւնը վկայում են, որ Եւրոպայում հանդէս է գալիս մի նոր խոշոր ուժ»։ Պաշիչը պատասխանելով Մայորեսկուի ճառին, վերջում աւելացրել է. «Մենք բարեմաղթում ենք, որպէսզի Ռումինիան միշտ մեր ներկայացրած ազգութիւնների գլուխ կանգնած մնայ և ցոյց տայ կարգապահութեան, խաղաղութեան և առաջադիմութեան ուղին»։

Աթէնք. — Ի պատիւ հաշտութեան

Թնդանօթային առաջին զարկից յետոյ փողոցներում սկսվեց մեծ թափօր։ Ամբոխը անցնում էր փողոցներով աղաղակելով. «Կեցցէ Թագաւորը և զօրքը, կեցցէ Վենիզելօսը, կեցցէ Յունաստանը»։ Բոլոր տները զարդարված են դրօշակներով, զանգակները ղօղանջում են։ Քաղաքը լուսավառված է։

Բելգրադ.—Եռանդուն պատրաստութիւններ են տեսնվում դիմաւորելու սերբիական խաղաղարար պատգամաւորներին։ Հասարակութեան այլ և այլ խաւերից Պաշիչին ուղարկել են շնորհաւորական հեռագիրներ հաշտութիւն կայացնելու առիթով։ Բուռն համակրական ցոյցեր են սպասվում։

Բերլին.—Հաշտութիւն կայացնելու առիթով Վիլհելմ կայսրը և ռումինական Թագաւորը սրտաբուղխ հեռագիրներ փոխանակեցին։ Կայսրը պարգևատրեց Մայօրեսկուին Կարմիր Արծուի մեծ խաչով։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳՈՐԾԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

27 և 28 յուլիսի

Կ. Պօլիս.—Պետ. Հեռ. Գործ. Թղթակիցը անցնելով Սան-Ստեֆանօ և Չաթալջա, հեռագրում է, որ Թիւրքերը անընդհատ զօրքեր և ռազմամթերքներ են տեղափոխում Թրակիա և տենդային եռանդով ամրացնում են ռազմական կէտերը։ Պօլսից մինչև Չաթալջա ահագին զօրք է կենտրոնացված։

Բուխարեստ.—Գլխաւոր զօրաբանակից ստացված պաշտօնական հաղորդագրութեան համաձայն, պատերազմի բեմի վրա գործող զօրքերի մէջ նկատ- [illegible] 425 կասկածելիներ։ Խոլերայից և այլ հիւանդութիւններից մեռել են 133 հոգի։

Մայօրեսկուն ստացել է շնորհաւորական հեռագիր այն առիթով, որ Ռուսաստանը Կավալայի հարցում ընթանում է Աւստրիայի հետ։ Լրագիրները նախազգուշացնում են Ռուսաստանին այն քաղաքականութեան հաւանական հետևանքներից, որի մէջ Աւստրիան ուզում է նրան ձգել։

Բուխարեստ.—Յուլիսի 27-ին կայացաւ խաղաղարար կոնֆերէնցիայի վերջին նիստը։ Պաշիչը յայտարարեց, որ Սերբիան իրան իրաւունք է վերապահում դրամական վարձատրութեան հարցի լուծումը յանձնելու Հաագայի դատարանին։ Միևնոյնն էլ յայտարարեց Վէնիզելօսը։

Բուխարեստ.—Խաղաղարար կոնֆերէնցիայի յուլիսի 26-ի նիստում Մայօրեսկուն հաղորդեց ռուսական և աւստրիական դեսպանների յայտագիրները, որով նրանց կառավարութիւնները տեղեկացնում են, որ իրաւունք են վերապահում իրանց Կավալայի հարցը վերաքննելու, ըստ որում ռուսաց յայտագիրը նախատեսում է այդ իրաւունքի կիրառումը միւս պետութիւնների համաձայնութեամբ։ Բուլղարական պատգամաւորները յայտնեցին, որ այդ յայտագիրները դրդեցին իրանց վերջնականապէս ստորագրել դաշնագիրը։ Սահմանների որոշման հարցում տարաձայնութիւն ծագելու դէպքում, դաշնագրով որոշված է հրաւիրել միջնորդ դատարան Բելգիայի, Հօլլանդիայի և Շվէյցարիայի ներկայացուցիչներից։

Պարիզ.—«Թան» լրագրում տպված է. «Ֆրանսիական կառավարութիւնը յուլիսի 26-ին միայն տեղեկացաւ այն քայլի մասին, որ նախաձեռնել է Բուխարեստի ռուսաց դեսպան Շեբեկօն հաշտութեան դաշնագիրը վերաքննելու մաքով։ Կառավարութիւնը կը քննէ այդ քայլից առաջանալիք հետևանքները, ղեկավարվելով ջերմ ցանկութեամբ՝ Բուխարեստեան դաշնագիրը Ռուսաստանի համար ընդունելի դարձնելու այն պայմաններում, որը ֆրանսիական կառավարութիւնը գտնում է արդարացի և բաւարարելի»։

Աթէնք.—Թագաւորը դիմելով զօրքին ու նաւատորմին յոյն-բուլղարական սահմանի համաձայնութիւնը ստորագրելու մասին, ասում է հրամանագրի մէջ, որ շնորհիւ թափված արեան, կրած զրկանքների և ցամաքային զօրքի ու նաւատորմի քաջութեան Յունաստանը դարձաւ մեծ։ Թագաւորը շնորհակալութիւն է յայտնում կատարած սխրագործութիւնների համար և պարծանք է զգում այդպիսի զօրքի ու նաւատորմի առաջնորդը լինելու համար, հրամայում է պարգևատրել պատերազմի մասնակցողներին մեդալով։ Այնուամենայնիւ, ասում է հրամանը, դեռ ևս աւարտված չէ գործը. հարկաւոր է Յունաստանը դարձնել ուժեղ։ Թագաւորը անընդհատ ձգտելու է այդ նպատակին հասնելու և յոյս ունի, որ դրօշակի ներքոյ միացողները կօգնեն իրան, իսկ իրանց հայրենի տները վերադարձողները կը պահպանեն իրանց վճռականութիւնը ամրապնդելու Յունաստանի զինուորական հզօրութիւնը, որպէսզի բարեկամները նրան յարգեն, իսկ թշնամիները՝ վախենան։

Բուխարեստ.—Աւստրիայի ձգտումը՝ վերաքննել տալու բուխարեստեան դաշնագիրը և այդ առիթով Վիեննայի մամուլի էջերում լոյս տեսած յօդուածները այստեղ խիստ քննադատութիւն են առաջ բերել։ «Էպօկան» ասում է. «Մենք հասկանում ենք պետութիւնների միջամտութիւնը հաշտութիւն կատարելու նպատակով, բայց չենք թոյլ տայ միջամտելու կայացրած հաշտութիւնը նորից խախտելու համար, ուստի և պէտք է միանալ Սերբիայի ու Յունաստանի հետ՝ սպառնացող վտանգի դէմ ընդհանուր կռիւ մղելու համար»։ «Դիմինէացան» ասում է. «Աւստրիան երևան հանեց իր ինտրիգների քաղաքականութիւնը։ Կորցնելով Բալկաններում ունեցած իր վստահութիւնը, նա այժմ միջամտութիւն գործելով ձգտում է սառեցնել Ռումինիան և կանգնեցնել բալկանեան պետութիւնների վերածնութիւնը»։

Վիեննա. — Ընդդիմադիր թերթերը շարունակում են իրանց ագիտացիան բուխարեստեան դաշնագրի վերաքննութեան դիտաւորութեան դէմ, որ ունի կառավարութիւնը, շեշտելով, որ մի միապետութիւն, ուր ամենուրեք երկպառակութիւններ են և ամբողջ շրջաններ բռնկված են ըմբոստութեան շարժումով, իսկ ժողովրդի տնտեսու- [illegible] ֆինանսները խախտուած, կարօտ է խաղաղութեան, մանաւանդ, որ Իշխանը այս կամ այն բալկանեան պետութեանը պատկանելու հարցը չէ շօշափում երկրի կենսական շահերը։ «Ցէյտը» յոյս է յայտնում, որ Գերմանիայի ազդեցութեան շնորհիւ կաջողվի խուսափել վերաքննելուց։ «Արբէյտէ Ցայտունգը» ասում է, որ աւստրիական դիպլօմատիան ծառայում է Ռուսաստանին, սակայն ռուս դիպլօմատիան իր ժամանակին դէն կը շպրտի վերաքննելու ծրագիրը և մենակ կը թողնի Աւստրիային։ Ռուսաստանը չէր կարող աւելի դիւական դաւ հնարել, քան առաջ քաշելով վերաքննելու նախադիծը. Աւստրիային դժուար կացութեան մէջ ձգել ու փակել նրա առաջ ապագայի յոյսը։

Սօֆիա.—Սօֆիայի բոլոր ընկերութիւնները, կորպորացիաները և մակեդոնական էմիգրանտները պատրաստվում են բողոքելու բուխարեստեան դաշնագրի որոշումների դէմ։

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ

(ԼՈՒՐԵՐԻ ՄԸ ՑՈՒՑԱԿԸ)

—o—

Եւրոպիան ու իրողութիւնները

I

Կ. Պօլիս, 18 յուլիս

Էդիրնէի խնդիրը հայկական խնդրոյն բանալին ըլլալ կոչուած ըլլալով, հայերը մեծ ուշադրութեամբ կը հետևին անոր անցուդարձերուն։

Եթէ Թիւրքերը յաջողին ուէ կերպով Էդիրնէն իրենց պահել, եւրոպական դիւանագիտութիւնը, Էսկուտարի ու Սալօնիկի սպառնալիքները առ ոչինչ համարելով կամ զանոնք չքացնելու հնարքը գտնելով, այլևս անկարելի է յուսալ, թէ հայկական նահանգներու մէջ սոսկ դիւանագիտական միջոցներով կարելի ըլլայ երաշխաւորուած բարենորոգումներ գործադրել։

Էդիրնէի մէջ Թիւրքերու մնալը, նոյնիսկ հակառակ բացորոշ սպառնալիքներուն Անգլիոյ բոլոր դիւանագէտներուն, ամենամեծ յաղթանակ մը պիտի ըլլայ Թիւրքիոյ համար և Իթթիհատի համար շատ քաջալերական իրողութիւն մը, որ կրնայ ամրապնդել իրենց ընդդիմադրութեան քաղաքականութիւնը ուրիշ խնդիրներու համար, որոնց մէջ կենսական կարևորութիւն ունի մեզի համար հայկականը, մեր կենաց և մահու խնդիրը։

Հետևաբար Էդիրնէի խնդրոյն հայոց արտակարգ կերպով լարուած ուշադրութիւնը շատ դիւրահասկնալի է և բնական։ Դժբաղդաբար դիւանագիտութեան դանդաղ անիւներուն գնացքէն դեռ կարելի չէ վերջնական եզրակացութեան մը գալ հասնիլ։

Ամբողջ շաբթուան ընթացքին չկատարուեցաւ բնաւ դէպք մը կամ իրողութիւն մը, որմէ կարելի ըլլար հանել որոշ և հաստատ եզրակացութեան մը։ Լօնդօնի դեսպանախորհուրդին Էդիրնէն Թիւրքիոյ չձգելու որոշումը միայն իբր որոշում արձանագրուեցաւ, սակայն երբեք չլսուեցաւ, թէ եւրոպական ընդհանուր համաձայնութիւնը ինչ միջոցներ ձեռք առնել որոշած է Թիւրքիան պարտաւորելու համար, որ թողու Էդիրնէն։

Հայաստանի գրաւման վերջնական առաջարկը ընդունելութիւն չէ գտած եւրոպական կառավարութեանց առջև, սակայն իրենց կողմէն աւելի գործնական ու աւելի դրական առաջարկ մըն ալ չէ ներկայացած։

Թիւրքերուն այն անկեղծութիւնը, թէ եւրոպական ներդաշնակութիւն ըսուած այս հակառակամարտ երիվարներէն լծուած այդ կառքը կարելի չպիտի ըլլայ որոշ ուղղութեամբ մը առաջացնել, շատ դրական տեսակէտ մըն է և վերջին օրերս տրուած երևոյթները կարծես թէ իրաւունք կու տան թիւրքական տեսակէտին, որուն յաջողութիւնը հաւանական կերևայ։

Թիւրք թերթեր վերջին մէկ երկու օրերուն մէջ ուրախութեամբ կաւետեն իրենց ընթերցողներուն, թէ մէկ քանի մեծ պետութիւններ — մեծամասնութիւնը — արդէն որոշած են Թիւրքիոյ ոյժ տալ։ Իսկ երբ ընդդիմադիր շատ բուռն կերպով կարտայայտուին Ռուսիոյ և Անգլիոյ նկատմամբ։ Մասնաւորապէս Անգլիոյ նկատմամբ դառնացած լեզու մը կը գործածեն Թիւրքերը, և կարծելով թէ Անգլիան շահելով արդէն վտանգը անհետացած պիտի ըլլայ և եւրոպական ներդաշնակութիւնը (!!!) իրենց դէմ դառնալու անկարող, ուստի Անգլիան կաշառելու փորձեր կըլլան։

Այս նպատակով այսօր կամ վաղը Լօնդօն պիտի մեկնի՝ երբեմն Բերլինի դեսպան, Լօնդօնի հաշտութեան ժողովի մէջ Թիւրքիոյ երկրորդ պատուիրակ, և այժմ հանրօգուտ շինութեանց մինիստր Օսման Նիզամի փաշա, որուն միսիոնին վրայ զանազան տեսակ զրոյցներ կը շրջին։

Օսման Նիզամի փաշա Լօնդօն կերթայ, կըսուի, Անգլիան կաշառելու պաշտօնով։

Սակայն կաշառքի ձևի մասին որոշ տեղեկութիւններ չկան։

Անգլիան կաշառելու պաշտօն ունենալը Թիւրք թերթերու գրածներէն ալ շատ որոշ կը հասկցուի։ Կաշառքն ալ կը հասկցուի թէ ի՛նչ կրնայ ըլլալ։

Կօվէյտի համար եղած զիջումներուն նման քանի մը ուրիշ զիջումներ բաւական կը համարուին հոս Անգլիան շահելու համար։ Կըսուի նոյն իսկ, թէ երիտասարդ-Թիւրք շրջանակներու մէջ կը խօսուի Եգիպտոսի ոսմ. գերիշխանութենէն բոլորովին հրաժարելու և Անգլիոյ հաճելի երևալու մասին այս կերպով։

Իսկ եթէ ասոնք ալ չգոհացնեն և ռուսական գրաւում մը հաւանական դառնայ Հայաստանի համար, Օսման Նիզամի փաշան արտօնուած է եղեր Էդիրնէի և Հայաստանի Թիւրքիոյ մնալը ապահովելու պայմանով ընդունիլ անգլիական կօնտրօլ Թիւրքիոյ վարչական և տնտեսական գործերուն վրայ։

Այս բոլոր զրոյցները իրենց մէջ քիչ շատ հիմ ունին և բաւական ալ հաւանական կը թուին։

Էդիրնէն ոչ միայն արժանապատւութեան, այլ նաև կեանքի խնդիր մը եղաւ Իթթիհատին համար, և զայն պահելու համար կը կարծուի, թէ ամեն զոհողութիւն յանձն պիտի առնեն։

Էդիրնէի անխօսուկ կերպով յանձնումը կատարեալ մահացումն է իթթիհատական վարչութեան, հետևաբար գերագոյն զոհողութեանց պատրաստ են։

Հայորդի

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.

27 և 28 յուլիսի

Կրասնոյէ-Սէլօ.—Յուլիսի 27-ին, առաւօտեան ժամը 10-ին, Նիկոլինօ գիւղից դէպի հիւսիս-արևելք տեղի ունեցաւ զօրքերի մանեօվր, որին մասնակցում էին երկու հակառակորդ կողմերը՝ կապոյտներն ու կարմիրները։ Կապոյտների վրա պարտք էր դրված Ցարսկոյէ-Սէլօն գրաւելուց յետոյ՝ գրաւել նաև Կրասնոյէ-Սէլօն, իբրև մի շատ կարևոր դիրք-յենարան մայրաքաղաքին մօտենալու համար։ Կապոյտների հրամանատարն էր գեներալ-լէյտենանտ Գերցիկը, իսկ կարմիրներինը՝ գեներալ-մայոր Պուզպրեվսկին։ Պրեօբրաժէնեան զօրավրանների մօտ հաւաքված սպասում էր կայսերական սվիտան, զինուորական մինիստրը, գլխաւոր շտաբի պետը և այլն։ Ֆրանսիական հիւրերը զինուորական-աւտոմոբիլային դպրոցի աւտոմոբիլներով գնացին բլրի վրա գտնվող Նիկոլինօ գիւղը, ուր կենտրոնացած էր մանեօվրի գլխաւոր հետաքրքրութիւնը։ Այստեղ էին զօրքերի Օգոստափառ գլխաւոր հրամանատարը՝ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը իր շտաբով, օտարերկրեայ զինուորական գործակալներն ու դեսպանութիւնների կցորդները։ Մօտաւորապէս ժամը 10-ին Նորին Կայսերական Մեծութիւնը ժամանեց Պրէօբրաժէնեան զօրավրանների տեղը և այնտեղից էլ ավտոյի ուղեկցութեամբ մեկնեց Նիկոլինօ։ Բարձրագոյն ներկայութեամբ սկսվեց կապոյտների յարձակումը Նիկոլինօյի վրա։ Նիկոլինօն պաշտպանում էին կարմիրները։ Երկու կողմից որոտացին հրացանները։ Գնդակաձգութիւնը երբեմն սաստկանում էր. համազարկերը արագանում, երբեմն էլ լռում։ Կապոյտները փորձ արին հիւսիս-արևելքից մօտենալ ու պաշարել Նիկոլինօն։ Կարմիրները նկատեցին այդ շարժումը և առաջն առան։ Այստեղ մեծ հետաքրքրութիւն առաջ բերեց զօրամասերի շարքերը իրար հետ պահպանելու համար շների գործածութիւնը այս մանեօվրում, որոնք, ստանալով հրամանների ծրարները, հասցնում էին ըստ պատկանելոյն։ Երբ մանեօվրի դրութիւնը պարզվեց, հնչեց ազդանշանը և զօրահրամանատարները հաւաքվեցին։ Նորին Մեծութիւնը շնորհակալութիւն յայտնեց զօրքերին ու մեկնեց Նիկոլինօյից։

Կրօնշտադտ.—Յուլիսի 28-ին եկել էր ֆրանսիական գլխաւոր շտաբի պետ գեներալ Ժոֆֆրին կրօնշտադտեան ամրութիւնները դիտելու համար։

Հելսինգֆօրս.—Մինչև յուլիսի 27-ը ընտրութիւնների ձայները արտայայտված են հետևեալ թւերով. սօցիալ-դեմօկրատները ստացել են 307,450 ձայն, հին ֆինները՝ 145,750, երիտասարդ-ֆինները՝ 104,111, շվէդները՝ 94,458, ագրարները՝ 56,274, քրիստոնեայ բանւորները՝ 5223, անկուսակցականները՝ 1618 ձայն։

Լօնդօն.—Ասկվիթը, ընդունելով կանանց ընտրողական իրաւունքները վերապահելու օգտին աշխատող ընկերութիւնների ազգային դաշնակցութեան պատգամաւորութիւնը, ասաց, որ ընդունում է պատգամաւորութիւնը նկատի ունենալով նրա խաղաղ վերաբերմունքը, որպիսին ներկայ օրերում խիստ հակապատկեր է ներկայացնում այն յանցաւոր գործելակերպին, որը դժբաղդաբար մի քանի տեղերում չափազանց տարածված է։ Ամբողջ հարցը այնպիսի բնոյթ է կրում, [illegible] գից. «Եթէ այդ լուծումը չը լինի նպաստաւոր, այն ժամանակ ոչ մի քաղաքական կոմբինացիա չէ կարող արգելք լինել ձեր առողջութեանը»։

Լօնդօն. — Երեկոյեան լրագիրները հաղորդում են, որ սուֆրաժիստուհիները փորձ են արել պայթեցնելու Սեստոնում փակված բարձրագոյն դըպրոցը, այն տեղին մօտիկ, ուր Լլօյդ Ջօրջը ճառ արտասանեց իր կազմակերպած հանքափորների միտինգի մասին։ Ոստիկանութիւնը գտել է պայթուցիկ իրեր։ Հանգցրել են ռումբի պատրոյգը դպրոցական սենեակներից մէկի հրդեհվելու միջոցին։ Հրդեհը հանգցրել են հրդեհաշէջները։ Գօլլօվէյի բանտին մօտիկ սուֆրաժիստուհիները յարձակում գործեցին բանտային բժշկի վրա։ Բժշկին օգնութեան հասան ոստիկանները և բանտից ազատված ոչ սուֆրաժիստուհի կանայք։ Կարճատև մաքառումից յետոյ սուֆրաժիստուհիներին ցրել են։

Լօնդօն.—«Թայմսի» ասելով, Վաշինգտոնում մեծ անհանգստութիւն է տիրում Մեքսիկայի վարմունքի առիթով։ Պատերազմը համարվում է շատ հաւանական։

Տօկիօ.—Եապօնական կառավարութիւնը, որ երրորդ անգամն էր բողոքել Միացեալ-Պետութիւններին կալիֆօրնիական օրինագծի դէմ, մտադիր է, առանց պատասխանի սպասելու, բանակցութիւններ սկսել նոր համաձայնութիւն կայացնելու մասին, որով կը վերանար հակաեապօնական օրինագծեր ստեղծելու հաւանականութիւնը։

Մօձիից եկաւ Սունեատսէնը։ Լուր է պտտում, որ կառավարութիւնը մտադիր չէ նրան հովանաւորել և պահանջելու է, որպէսզի նա հեռանայ Եապօնիայից։ Հասարակական կարծիքը համակիր չէ այդպիսի որոշման։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀՈՐԻԶՈՆԻՆ

Մեր գրադարանները

Վան, 17 յուլիս

Վասպուրականը իր 18-է աւելի տարրական ու երկրորդական կրթական հաստատութիւններու դէմ ունի միայն վեց գրադարան, որոնք ոչ մի կերպով նպաստաւոր կրնան ըլլալ աշակերտի մտքի ամրացման և բեղմնաւորութեան։ Այս գրադարանները մեր քաղաքական կուսակցութիւններու ջանքերով գոյութիւն ունեցան սահմանադրութեան հռչակման օրերուն և վերջերս։ Այդ հաստատութիւնները գրեթէ չունին ոչ միայն դպրոցականներուն յատուկ ընթերցանութեան գրքեր, այլ նոյնիսկ ժողովրդեան ընթերցանութեան համար ալ շատ քիչ բան կայ։ Ասոնց ծախքերը կը հոգացուին վիճակախաղերով, թատերական ներկայացումներով և այլ նպատակայարմար միջոցներով։ Ցաւելով պիտի ըսենք, որ այդ հաստատութիւնները զուրկ են ուէ դիսցիպլինէ. 1000—3000 կտոր գրքերը խառնուած խառն ի խուռն, առհասարակ առանց բաժանմունքի. այսպէս՝ մանկական, վիպական, կենսագրական թէ թատերական գրքերը շարուած են իրենց տեղերն ի ցոյց մարդկան, միանգամայն քայքայուած ու պատառուած։

Վերցնենք գրադարան առ գրադարան և քննենք զայնս։

«Ազատութեան լոյս» գրադարանը ունի առանձին յարկ մը, որուն համար կը վճարուի տարեկան 24 ոսմ. լիրա։ Այս հաստատութիւնն ունի բաւական սենեակներ։ Շուրջ 2000—3000 գրքերու մէջ հազուագիւտ են մանկական գրքերը. «Ազատութեան լոյսի» գրքերը գրեթէ բոլորն ալ չափահասներու և մեծ մարդկանց վերաբերեալ կտորներ են։ Այս հաստատութիւնը, կարելի է ըսել, հարուստ է տեղական բոլոր գրադարաններէն։ Գրադարանապետը բաւական խղճամիտ է իր պաշտօնին մէջ։ Գրադարանն ունի իր վարչութիւնը, որ կը վարէ ու կը հսկէ հաստատութեան պիտոյքներուն ու կանոնաւորման։ Այս գրադարանը դաշնակցականներունը կը համարուի։ Տարեկան մօտ 50—60 ոսմ. լիրա ծախք ունի։

«Մ. Աւետիսեան» գրադարանը կը բաղկանայ մէկ սենեակէ, որուն համար կը վճարուի 8 ոսմ. լիրա։ Այս սենեակը կը ծառայէ թէ ընթերցանութեան, թէ գրադարանի և թէ ժողովարանի։ Հաստատութիւնը տարին 40—50 ոսմ. լիրա ծախքի կը կարօտի, որ կը հոգայ վարչութիւնը, կազմուած՝ սահմ.-ռամկավարներէ։ Պէտք է ըսել, որ գրադարանը կը կարօտի լուրջ ձեռքերու, որպէս զի հասնի իր կոչման բարձրութեանը։ Նկատելի է ցանկութիւն՝ բարելաւելու և կատարելագործելու։ Առանձնապէս զգալի է մանկական ընթերցանութեան գրքերու պակասութիւնը։ Ունի մօտ 2000—2500 կտոր գիրք։

«Մարտիկ» գրադարանը կը կառավարուի ս.-դ. հնչակեաններէ։ Սա ամենաաղքատ գր.-ընթերցարանն է։ Այս հաստատութեան վարչութիւնը տարեկան հազիւ 25—30 ոսմ. լիրա կը ծախսէ։ Նկատելի է, որ կարգ ու կանոնը այստեղ ևս կը կաղայ։

Ասոնցմէ զատ՝ կայ նաև քաղաքիս Ա- [illegible] անունով գրադարան մը, որ բացուեցաւ անցած տարի։ 500-ի մօտ ունեցած գրքերը դասաւորուած են այնպէս, ինչպէս միւս գրադարաններու գրքերը։ Միայն մէկ սենեակ է, որ կը ծառայէ ընթերցանութեան և գրադարանի։

Քաղաքիս մէջ կան ուրիշ երկու գրադարաններ ևս, մէկը «Հայրիկեան» անունով, և միւսը՝ «Մ. Աւետիսեան» գրադարանի մասնաճիւղը, որոնք ոչ մի կերպով կը համապատասխանեն տեղական պահանջներուն։

Ա. Բէնդու

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 10 յուլիս

[illegible] աշխարհագրագէտներու դիտողութիւններն այն եզրակացութեան են յանգած, որ Մերձաւոր Արևելքի երկիրներէն ամենակեղտոտը և յետամնացը Պարսկաստանն է, որուն կը յաջորդէ Թիւրքիան։ Մուշը, որ Թիւրքիայի ամենէն աւելի յետամնաց անկիւններէն մին է, իր կեղտոտութեամբ կը մրցի օսմանեան կայսրութեան միւս բոլոր քաղաքներուն հետ։

Մուշ քաղաքը կը բաղկանայ 11 թաղերէ, որոնցմէ 5-ը հայաբնակ և 6-ը թիւրքաբնակ։ Քաղաքը ունի հրապարակ (շուկայ) մը հինգ խաներով։ Թաղային փողոցները իրենց լեփ լեցուն աղբակոյտերով կատարելապէս կը մրցին շուկայի հինգ կեղտոտ խաներու հետ։

Տեղական կառավարութիւնը և քաղաքապետութիւնը բոլորովին անզօր են բարոյական կամ օրինական ուէ միջոցով—ըլլայ այդ միջոցը ճնշում—մաքրել տալ քաղաքը և խաները։

Այժմ կը հարցնէք անշուշտ, թէ այս ընդհանուր կեղտոտութեան մէջ ինչպէս համեմատաբար պակաս են վարակիչ հիւանդութիւնները։

Դա գլխաւորաբար պարտինք Մուշի բնական խիստ մաքուր օդին ու ջուրին։

Մուշ քաղաքն ընդգրկուած է Տօրոսի լեռնաշղթայի Տիրին կամ Ծիրին կատարի ջրառատ լեռնալանջի բազուկներու մէջ։

Մուշն ունի միակ գետ մը, իսկ ձիւնապատ լեռներէն աջ ու ձախ կը հոսին երկու պաղորակ գետակներ, և Մուշի այդ լեռնաշղթաները ծածկուած են գեղածիծաղ բարձրահայեաց այգիներով։ Մանաւանդ անուն ունին Մուշեղեան բերդի ստորոտի «Տափիկ» ըսուած լեռնահովտի հովասուն ու ջրաւէտ այգիները, որոնք կարող են ապագային զուիցերական վիլլաներու վերածուիլ։

Մուշի թաղերու ամենէն կեղտոտը կը համարուի Զորոյ թաղը, ուր զետեղուած են քաղաքի գինետուները, որոնք սովորաբար միայն չամիչէն օղի կարտադրեն։ Մշեցիները զուտ գինի շատ քիչ կը գործածեն. խմածնին աւելի 20° չամիչի օղի է։

Մուշի Վերի թաղը կը նմանի ոչխարի հաստ աղիքի, որ փողոցի մէկ բերանէն մանողն ստիպուած է միւսէն դուրս գալու առանց աջ ու ձախ կարենալ թեքուելու։

Վերի թաղին կից է Թիւրք Խուրդենց թաղը։ Աւանդութիւնը կըսէ, որ այս «խուրդ» (գայլ) բառը մնացեր է Մամիկոնեան Գայլ Վահանէն, և Մուշի խուրդենցի Թիւրքերը բացի հայկական բարեմասնութենէն՝ ընդունած են, թիւրքական աւարառու օրինաց համաձայն, Գայլ Վահանի խորամանկութեան և վայրագութեան բացասական կողմերը։

Մուշի մէջ խուրդենք կը համարուին հայէն դարձած. ատոր համար կըսուի, թէ «գինիէն դարձած քացախը բարկ կըլլայ». այդ Թիւրքերը ամենէն վայրագ ու ճարպիկ գողերն են քաղաքիս մէջ։ Մասնաւորապէս Տափիկի այգիները անոնց վերիշխանութեան տակ են։ Թախիծ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ԱՒԵԼԻ ԱՆՀՐԱԺԵՇՏԸ

I

Մի տարի է, ինչ մամուլը զբաղվում է դպրոցական և գրական ֆոնդերի հարցերով. սակայն, ինչպէս երևում է, հօրիզօնականները դեռ ևս չեն ըմբռնել կամ գիտնալ չեն ցանկանում այն տարրական ճշմարտութիւնը, որ ներկայումս դպրոցական ֆոնդը աւելի կարևոր և այժմէական է, քան գրականը։ Այս հարցերի մասին գրված բազմաթիւ յօդուածներից ընթերցող հասարակութիւնը արդէն եկել է այն գիտակցութեանը, որ խրօք անհրաժեշտ է աջակցել դպրոցական ֆոնդին, և «Հօրիզօնը» անշուշտ այս հանգամանքը նկատի ունի, որ ամեն կերպ աշխատում է մարդկանց մտքերը մոլորեցնել յօգուտ գրական ֆոնդի. սակայն այդպիսիները սխալվում են։

Նմաններին այլ ևս չեն օգնի ոչ առաջնորդողները և ոչ էլ «Բագուի Ձայնի» «Դոտ քո ձեռքից» նողկալի յօդուածները։

Անցաւ հօրիզօնականների համար երազելի ապագան։ Այժմ ուրախութեամբ կարող ենք արձանագրել, որ ժողովուրդը փոքր ի շատէ եկել է այն գիտակցութեան, որ նա կարող է հեշտութեամբ զատել լաւը ավելորդից, օգուտը վնասից, այժմէականը հեռաւորից։ Ի հարկէ սրանով չենք ասում, թէ գրական ֆոնդի գաղափարը խոտելի է և վնասակար, ընդհակառակն իր հերթին առաջինը մենք կը լինենք, որ արձագանք կը տանք գրական ֆոնդի իրականացմանը։

II

Սակայն այժմ մեզ զբաղեցնողը «Հօրիզօնի» № 160-ում լոյս տեսած «Անհրաժեշտը» խորագրով տենդենցիոզ յօդուածն է։

Յօդուածագիր Էմ-Բէնի ցանկութիւնն է, որ իւրաքանչիւր ասպարէզում ծառայողը պրօֆեսիօնալ ծառայող լինի, ի միջի այլոց գրողն էլ պրօֆեսիօնալ գրող լինի։ Շատ լաւ, ցանկութիւնը համակրելի է և չեմ կարծում, թէ մէկն ու մէկը դէմ լինի, սակայն մեզ հարց տանք. բուն պատճառը ինչ է, որ մեր գրողները իրանց պրօֆեսիայով չեն զբաղվում և ամեն 5—10 տարին հազիւ մի փոքրիկ գրուածք են տալիս և ստիպված լինում կամ վարժապետ դառնալու և կամ պրիկաշչիկ, ինչպէս գրում է Էմ-Բէնը։

Յօդուածագիրը փոխանակ այդ երևոյթի բուն պատճառը գտնելու և աշխատելու այդ պատճառը վերացնելու համար միջոցներ որոնել, ընդհակառակը ճգնում է ապացուցել, որ գրական ֆոնդի ստեղծմամբ գրողները կապահովվեն և իւրաքանչիւր գրող ամեն 5—10 տարին մի գրուածք տալու փոխարէն՝ այս անգամ կը տայ տարին 5—10 գրուածք։

Ենթադրենք, որ գրական ֆոնդը իրականացաւ, գրականութիւնն էլ հարստացաւ. բայց հետաքրքրական է իմանալ, թէ այդ միջոցով ընթերցողներ էլ կը գտնե՞նք։

Եւ վերջապէս ինչո՞ւ պէտք է անուղղակի ճանապարհով գրականագէտներին ապահովել, քանի որ կարելի է ստեղծել այնպիսի միջոցներ, որոնցով գրականութիւնն էլ կը զարգանայ և գրողներն էլ կապահովվեն. որն է աւելի գերադասելի. ընթերցողներով ապահովել գրողներին, թէ հանգանակութեամբ ապրուստի միջոցներ հայթայթել։ Եւ չէ՞ որ հանգանակութեանը ժողովուրդն է մասնակցելու... Բայց մի ժողովուրդ, որ չէ զգում գրքի պահանջը, արդեօք ձեռնհա՞ս է հասկանալու գրական ֆոնդի նշանակութիւնը և նպաստելու նրա իրականացմանը։ Ի հարկէ ոչ։ Բաւական է յիշել այն հանգամանքը, որ լոյս տեսած գրքերից շատ քչերն են երկրորդ տպագրութեան արժանանում, իսկ եթէ ի նկատի ունենանք, որ մեզանում, հայ իրականութեան մէջ, գրքերի առաջին հրատարակութիւնը շատ հազուագիւտ դէպքերում հասնում է 3000—3600 օրինակի, ապա պարզ կը լինի, որ մեզանում գրքերը չեն սպառվում։ Եւ չէ՞ որ միևնոյն գրութիւնն է ստեղծվելու ապագայում ևս, եթէ ժողովուրդը չը նախապատրաստենք ընթերցանութեան համար։ Նկատի պէտք է ունենանք, որ իւրաքանչիւր գիրք լոյս է ընծայվում հասարակութեան համար, այլ ոչ թէ զանազան գրավաճառանոցներում կամ պահեստներում փոշիների տակ թողնելու։ Եւ ապագայում գիրքը ինչպէս կարող է սպառվել, քանի որ մենք չենք մտածում ժողովրդին կրթելու, մայրենի բարբառը սովորեցնելու։ Ինչո՞ւ թէ ռուս և թէ եւրոպական գրողները հէնց իրանց գրքերի վաճառումից են ապահովվում և նոյնիսկ խոշոր գումարներ թողնում, իսկ մեզանում այդ բանը տեղի չէ ունենում. պատճառը պարզ է։ Գրական շուկայում հայ գիրք չէ սպառվում, որովհետև ընթերցողներ չունենք. չը կան ընթերցողներ, որովհետև գրագէտ չեն, որովհետև դպրոցներ չունենք։ Ուրեմն ինչ պէտք է անել. միակ ելքը այն է, որ դպրոցների թիւը ստուարացնենք, որոնցով կենդանի կապ է պահպանվում ժողովրդի հետ։ Կրթական կապ պահպանելով ժողովրդի հետ, մենք կունենանք գրագէտներ, ապա գրքերն էլ կը սպառվեն և գրողներն էլ կապահովվեն։ Իսկ այդ պահանջին բաւարարութիւն կարող է տալ միմիայն իրականացած դպրոցական ֆոնդը, որի աջողութեանը նպաստում է ինքը ժողովուրդը։

Ահա բուն պատճառը, որ մեր գրականութիւնը չէ ծաղկում ու զարգանում։

Աստ. Վարդանեան

ՄԻ ՔԻՉ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

«Մշակի» մէջ, № 126-ում, լոյս տեսաւ յօդուած «Դիտող» ստորագրութեամբ, որի մէջ մաթեմատիկական հաշւով ցոյց տրվեց, թէ ինչպիսի՛ մեծ չափերով կոտորածի ենթակայ է Զարեքայ վանքի անտառը, և այդ հաշւից երևաց, որ միայն Գետաբեկի պղնձահանքին տրված է այդ կոտորված քանակութիւն նիւթեղէնը։

Անտառի կառավարիչ Միք. Տէր-Աւետիքեանը հերքում-յօդուածով յայտնեց, որ այդ քանակութիւնը միայն վանքի անտառից չէ մատակարարված պղնձահանքին, այլ այդ քանակութեան մէջ մտնում են նաև հարևան անտառներից մատակարարված նիւթեղէնները, և մատնացոյց արեց պղնձահանքի վարչութիւնից ստացած մի դոկումենտ իբրև ապացոյց։ Սակայն կարևոր էր, որ Տէր-Աւետիքեանը տպէր այդ դոկումենտը և, նախ, ինքը նրա վրա հիմնված հերքէր «Դիտողի» թւերը և, ապա, միջոց տար այդպիսով հասարակութեանն ևս վերահասու լինելու առաջնի սխալ և իր ճշմարիտ լինելուն. այսինքն՝ ինչ քանակութեամբ օտարների անտառներից, և որպիսի՛ քանակութեան, տեսակների, չափերի նիւթեղէն է բաց թողնված միմիայն վանքի անտառից. և միայն այսպիսով ցոյց կը տար նա «Դիտողի» «չարաչար սխալվելը» և «նրա ներկայացրած հաշիւների ոչ մի հիմք չունենալը»։

Այս անելու փոխարէն՝ նա պահանջում է Դիտողի ով լինելը, սպառնալով հակառակ դէպքում դիմելու դատարանին։ Դատարանի դիմելու իրաւունքը այսպիսի դէպքերի համար չէ. և դատարանը հօ առաջնի և իր ասածները հալած իւղի տեղ ընդունելու չէ. այլ նա ինքը պէտք է նոր քննութիւն անի, քրքրի պղնձահանքի բոլոր մատեանները և անտառը ենթարկի ստուգութեան։ Ինչպէս երևում է յօդուածից, Դիտողը մաքուր ցանկութեամբ պաշտպանում է անտառի օգուտը, հետևաբար՝ էջմիածնի շահերը. նա չի անուանարկում Տէր-Աւետիքեանին, այլ որոշեալ խնդիր դնում է հրապարակի վրա, որպէսզի Էջմիածինը քննի և մտածէ. արդեօք ինչ չա- [illegible] կայ է անտառը։

Այնուհետև յօդուածից երևում է, որ Դիտողը, եթէ ոչ մասնագէտ, գոնէ այնքան մեծ հմտութիւն ունի անտառների պահպանութեան և կառավարութեան գործում, որ նրան վստահութիւն է տալիս կարծիքներ յայտնելու անտառագիտութեան և անտառի անտեսութեան վերաբերեալ և վերլուծելու նիւթեղէնների քանակը չափերի։ Այս տեսակէտից ևս նրա յօդուածը արժէք պիտի ունենայ սինօդի համար։

Ուշադրութեամբ կարդալով Դիտողի յօդուածը և Տէր-Աւետիքեանի հերքումը, մենք անհրաժեշտ ենք համարում, որ սինօդը մասնագէտներից մի կոմիսսիա կազմէ և ուղարկի Զարեքայ վանքը տեղն ու տեղը քննելու գործը և Գետաբեկի գործարանի գրասենեակում ծանօթանալու բաց թողված անտառի քանակութեան հետ։

Եթէ կայ մէկը, որը պարտաւոր է այդ անելու, դա սինօդն է, որին ենթակայ է Տէր-Աւետիքեանը։ Եւ մենք յոյս ունենք, որ սինօդը կանէ այդ և թոյլ չի տայ, որ իր ստորադրեալը աւելորդ տեղը դատարանների դռները ընկնի։ Համալեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Վտանգաւոր խաղի հետեւանքը

Իզօբիլնայա կայ., 24 յուլիսի

Գիւղացի Ստ. Տեսչենկօյի երկու տաւարածները ամսիս 23-ին կովերը տանում են արածացնելու։ Կովերի հետ լինում է և մի մեծ ցուլ։ Խրճիթից մի քիչ հեռու՝ ցուլը սկսում է բառաչել։ Տաւարածներից աւելի հասակաւորը, որ լինում է մօտ 20 տարեկան, սկսում է ինքը ևս ցուլի պէս բղաւել։ Այդպէս շարունակ բղաւելով սկսում են մօտենալ միմեանց ճակատ-ճակատի։ Փոքրիկ ընկերը զգուշացնում է իր ընկերոջը՝ չը չարացնել ցուլին, բայց հասակաւորը տաւարածը ուշադրութիւն չէ դարձնում։ Եւ ահա՝ զայրացած ցուլը յարձակվում է մեծ տաւարածի վրա և պոզերով նրան գլորելով գետնին՝ թէ ոտքով և թէ գլխով մերձ ի մահ ջարդում։ Թէև մեծ դժուարութեամբ ազատում են, բայց ապրելու յոյս քիչ կայ։

Ս. Եաղուբեան

Աւազակային խումբ

Շնող գիւղ, 23 յուլիսի

Դարձեալ աւազակային խումբ, դարձեալ գիւղացու կեանքը թունաւորված ու տակն ու վրա եղած։ Կարսի գծի երկարութեամբ, Դեբետա գետի աջ կողմի սարերի ազգաբնակութիւնը ահ ու սարսափի մէջ է գտնվում այն կողմերում թափառող աւազակային խմբի երկիւղից։ Դաշտային աշխատանքների եռուն ժամանակն է. տղամարդիկ բոլորը գիւղերում են գտնվում, սարերում մնացել են կանայք միայն, որոնք լեղապատառ գիւղ են փախչում աւազակների երկիւղից։ Գիւղացիք ստիպված են սովորականից շատ վաղ սարերից գիւղ իջնելու։ Ինչպէս տարածված լուրերից տեղեկանում ենք, աւազակների խումբը բաղկացած է երեք հոգուց՝ գլխաւորութեամբ մի փախստական Ակոբի։ Մեր շրջանի գիւղացիները պատրաստվում են դիմելու գաւառային ադմինիստրացիային, որպէս զի Ախթալա կայարանից սկսած զանազան կէտերում պահակներ նշանակվեն և միջոցներ ձեռք առնվեն աւազակային խումբը ոչնչացնելու։

Անցեալները Ալլահվերդիի ֆրանսիական ընկերութեան ինժեներներին թալանողն էլ այդ խումբն է եղել, որի մասին գրված էր լրագիրներում։ Եօլչի

Հայ գաղութի ընթացիկ կեանքից

Կերչ, 12 յուլիս

Կէրչի հայ գաղութին վրայ նոր գրելիք բան մը չունիմ։ Գուցէ շատոնց լսած էք և այլ ևս նորութիւն չէ, որ տեղւոյս քահանայական հարցը յաջող և գոհացուցիչ կերպով լուծուած ու կարգադրուած է ի մխիթարութիւն ծխական ժողովրդեան։ Անցեալ ապրիլ ամսոյն տեղւոյս ծխականաց միաձայն ընտրութեամբ և թեմակալ առաջնորդ սրբազանի հաստատութեամբ Աստրախանի քահանաներէն տէր-Ղևոնդ Այտընեան Կէրչի հայ եկեղեցւոյն և գաղութին քահանայ և հոգևոր հովիւ կարգուած է. այդ քահանան անցեալ պատկան տօներէն ասդին տեղս ժամանած է. և ահաւասիկ 3—4 ամիս կըլլայ, որ անցած է իր նոր պաշտաման գլուխը. ծխատէրը ըստ ամենայնի ջանահնար կը լինի խղճմտօրէն կատարել իր քահանայական պարտականութիւնը հանդէպ ժողովրդեան և զանոնք մխիթարել հոգևորապէս. հայր Այտընեան, հանգուցեալ Սեդրակեան Արիստակէս սրբազանի ձեռնասուն- [illegible] էջմիածնայ Գէորգեան ճեմարանի։

Տեղւոյս ազգ. ծխական վարժարանը իր ուսումնական տարեշրջանը լմնցուց արդէն. դպրոցական հարցաքննութիւնք անցեալ մայիսի վերջերուն տեղի ունեցան. դպրոցի ուսուցչին դասախօսութիւնք փորձով և արդեամբ գոհացուցիչ նկատուելով թէ հոգաբարձութեան և թէ ծխականաց կողմէ պատշաճ դասուեցաւ յառաջիկայ ուսումն. տարւոյն ևս դասատուն թողուլ իր պաշտօնին մէջ թոշակի մասնաւոր յաւելմամբ. և այս գէշ կարգադրութիւն չէ. ըստ որում ամեն տարի վարժապետ փոխելը նախնական դաստիարակութեան լիովին վնասակար է, այդ կերպ վարուիլը (միշտ դասատու փոխելը) [illegible] ժամանակն ու ապագան մեռցնել ըսել է։ Յ. Խ.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՔԸ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՐԻԶԻՍԸ

Խանքենդ, 14 յուլիսի

Մեր վաղուց փայփայած իղձը կատարվեց. Շուշի-Եւլախ երկաթուղային գծի շինութեան գործը սկսված է և ինժեներներն արդէն ճանապարհը գծելով հասել են Խանքենդ։

Ինչպէս ամբողջ Ղարաբաղի, նոյնպէս և Խանքենդի ժողովրդի տնտեսապէս և կուլտուրապէս առաջադիմելու յոյսը կապված է երկաթուղու հետ։ Խանքենդցիք յոյս ունէին, որ զրկվելով այստեղ բնակվող զօրքի (որ այժմ Պարսկաստան է փոխված) եկամուտից, երկաթուղու գծի կառուցվելուց, Խանքենդով կանցնէր երկաթուղին և դրանով գոնէ բաղդ կունենան իրանց խորտակված տնտեսութիւնը վերականգնել։

Սակայն հանգամանքները այլ կերպ են տնօրինում։

Ճանապարհի ինժեներները՝ գլխաւորութեամբ ինժեներ Իւղբաշեվի, հասնելով մեզ մօտ մեծ ցնծութիւն են պատճառել ժողովրդին, միևնոյն ժամանակ ընդհանուր ուրախ տրամադրութիւնը ցրել են հետևեալ առաջարկութեամբ։

Գիծը Խանքենդով անցկացնելու համար պէտք է Խանքենդի հայ, ռուս և թուրք ժողովուրդը յանձն առնէ իր հաշւով Խանիբաղից մինչև Խանքենդ ճանապարհի խորթ ու փոս տեղերը հողով լցնել, հարթել։

Ժողովուրդը, որ պատրաստ է իր ուժերը ներածին չափ աջակցել երկաթուղու կառուցման գործին, մանաւանդ զգալով գիծը Խանքենդով անցկացնելու կարիքը, մնացել է տարակուսված. տարակուսված նրա համար, որ այն տասնեակ հազարների գումարը, որ պահանջվում է այդ գործի համար՝ միջոցներ չունի տալ։ Վերջին տարիների տնտեսական կրիզիսը այն աստիճան է թուլացրել, նուազեցրել ժողովրդին, որ հազիւ-հազ են կարողանում մարդիկ իրանց օրվայ պարէնը հայթայթել, բացառութեամբ մի քանիսների, որոնք սակայն հասարակական գործերում միշտ փայլում են իրանց անտարբերութեամբ և այս դէպքում, որքան էլ սրտաբաց լինեն՝ դժուար թէ կարողանան օգնել։

Ի՞նչ կարելի է սպասել մի ժողովրդից, որը միջոցներ չունի մի ծխ.-դպրոց պահելու, և այս առաջիկայ ուսումն. տարում եթէ դրսի օգնութիւն չը լինի դպրոցը փակվելու է։

Որքան անժխտելի է երկաթուղու գործում աջակցութեան կարիքը, նոյնքան և, աւելի ևս, սմքեցնող է Խանքենդի ժողովրդի տնտեսական վիճակը, որը բարւոքելու համար, աղաղակող պահանջ է գիծը Խանքենդով անցկացնելը։ Ս. Ասլանեան

ԳՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԱԾ

Նոր-Բայազէտ, 22 յուլիսի

Եթէ մեզանում գողութիւնները բոլորովին չեն արմատախիլ արված, գոնէ նրանք սահմանափակված են։ Նախկին տարիներում օր ու շաբաթ չէր անցնում առանց գողութիւնների և ժողովրդի խաղաղասիրութիւնը աւելի վրդովված էր զգում իրան, երբ վայրենի հակումները աւելի բորբոքվում էին և երես առնում և երբ մանաւանդ այդ հակումները մնում էին անպատիժ, անսանձ...

Այժմ, ինչպէս ասացի, գողութիւնները սահմանափակված են և այդ հակումները զսպված շնորհիւ գաւառապետ Ս. Ս. Ֆիլիպօվի, որը ոտք դնելով մեր քաղաքը առաջին ջանք գործ դրեց այդ վայրենութիւններին վերջ տալու և ժողովրդի հանգիստը գնահատելու։ Այժմ արդէն 2—3 տարի է ինչ մեզանում շատ հազիւ անգամ են պատահում գողութիւններ. լինում են դէպքեր, երբ խոտաքաղի միջոցին հարևանները մէկ մէկու խոտը սարից գողանում են և տուն բերում, բայց դա էլ մի տեսակ ախտ է, որ տիրում է մեր ռանչպար դասի մէջ, և այդ վատ սովորութիւնը արմատախիլ անելու համար հարկաւոր է դրական միջոցներ ձեռնարկել։

Եւ ահա գողութիւնը աւելի սանձահարելու համար տեղական ոստիկանութիւնը բերել է տուել մի քանի խուզարկու շներ, որոնք իրանց հոտառութեամբ գտնում են գողերին։ Ամսիս 19-ին այդպիսի մի գողութիւն բաց արին խուզարկու շների միջոցով, որպիսի գողութիւնը կատարվել էր տեղիս ջրաղացներից մէկում։ Յոյս կայ, որ գողութիւնները աւելի սահմանափակվեն այդ միջոցներով, քանի որ արդէն ժողովրդի մէջ մեծ երկիւղ է տարածվել այդ վերաբերութեամբ։ Եթէ ահը տարածվէր նաև խոտի գողութեան նկատմամբ, այն ժամանակ մեծ բարիք կը լինէր ժողովրդի համար, քանի որ խոտաքաղի հետ միասին սկսվում է նաև խոտի գողութիւնը... Անշուշտ խուզարկու շների ահը կազդէ բոլոր այն սրիկաների մտքի և համոզմունքի վրա, որոնք ձգտում են հարևանի ստացուածքը յափշտակել... Մի խօսքով՝ եթէ խուզարկու շների գործը լաւ հետևանք ունենայ, այն ժամանակ կարելի է յուսալ, որ «գառն ու գայլը» միասին կարածեն մեզանում։ Յուսանք։ Որսորդ

ԳԻՒՂԻ ՑԱՒԵՐԻՑ

Շինուհայրը Տաթևի վանքապատկան գիւղերից է։ Գիւղը մօտ գտնվելով վանքին և նրա փոխանորդների անմիջական այցելութիւնները տեսնելով ու լսելով նրանց խրատխուսանքները և յորդորումը դէպի ուսում, կրթութիւն միշտ էլ աշխատել է ունենալ դպրոց, ուր կրթվել ու գրագիտութիւն են ձեռք բերել գիւղական մանուկները։

90-ական թւականներին Շինուհայրի դպրոցը վիճակիս շատ թէ քիչ աչքի ընկնող վարժարաններից մէկն էր։ Չը նայելով որ փակվեցին մեր դպրոցները, սակայն վերաբացման օրից Շինուհայրը ունեցաւ իր դպրոցը, որը մինչև այժմ էլ տեղաւորված է Տաթևի վանքապատկան Կուսանաց մենաստանի սենեակներում գիւղի ծայրին, հինաւուրց պարսպապատ բակում։

Անցեալ ուսումնական տարում դպրոցում սովորում էին 70-ի չափ երկսեռ մանուկներ միայն մէկ ուսուցչի ղեկավարութեամբ և մի սենեակում։ Սակայն երեխաների շատութիւնը ի նկատի առնելով առաջիկայ ուսումնական տարում հոգաբարձութիւնը հրաւիրում է և երկրորդ ուսուցիչ դպրոցի կրթականը աւելի լաւ և արդիւնաւէտ հիմքերի վրա դնելու յուսով։

Հոգաբարձութիւնը նպատակ է դրել դպրոցը հին և խոնաւ սենեակներից տեղափոխել նոր, մաքուր և աւելի լոյս սենեակներ, և այդ՝ իսկ նպատակով ներկայումս կառուցվում է երկու մեծ սենեակ, ուր աշնան,—եթէ հասցնեն ի հարկէ,—պէտք է տեղաւորվեն աշակերտները։

Այդ սենեակները շինելու, աւարտելու համար գիւղը ոչ մի միջոց չունի և հոգաբարձութիւնը ինչպէս հիմքերն է ձգել բարերարների օգնութեամբ, այնպէս էլ դիմումներ է անում և նպաստ խնդրում շէնքը աւարտելու։

Հին սենեակները ևս մեծ կարիք ունեն վերանորոգութեան, նրանց յատակը, տանիքի թիթեղը փոխել, նորոգել է հարկաւոր։ Անձրևի և ձիւնի ժամանակ 4 սենեակներն էլ կաթում և ապրելու միանգամայն անյարմար են դառնում, ուր մնաց թէ աշակերտներ պարապվեն այդտեղ։

Դպրոցի բակում կանգնած է մի շատրուան-աղբիւր, չորս կողմից թափվող սառնորակ ջրով, որը շինվել է հայրենակից Գ. Ի. Տէր-Մարգարեանի ծախքով։ Մենք յիշեալ բարերարի ուշադրութիւնը կը հրաւիրենք նաև դէպի դպրոցի այդ նոր շինվող սենեակները։

Գիւղական համայնքի մէջ հազարից մէկը միայն նկատելի է ինքնաբերաբար նուիրաբերութիւն. օրինակ՝ Իսավերդի Աթայեանը և յիշատակ իր հայր Խաչատուրի նորերս շինել է քարէ սանդուղք և ծախսել է մօտ 150 րուբլի։

Առ հասարակ ինչպէս Զանգեզուրի գիւղական պանդուխտ երիտասարդները, շինուհայրցիք նոյնպէս շատ անտարբեր են դէպի իրանց ծննդավայրի կրթական և այլ կուլտուրական առաջադիմութիւնը։

Միթէ մեծ դժուարութիւն է 300—500 տուն ունեցող գիւղի երիտասարդութեան համար գոնէ երկու մաքուր, դպրոցի յարմար սենեակներ ունենալը։

Այստեղ ես չեմ ժխտում և ուրանում նրանց արած նուիրաբերութիւնը, սակայն երբ այդ կատարվում է ակամայից և կարծէք թէ իբրև մի աւելորդ և անտեղի ծախք, ահա այստեղ կորչում է բոլոր այն հմայքը և հոգեկան բաւականութիւնը, որ մարդս սպասում է բարերարութիւնից։ Գիւղական մեր հազար ու մի ցաւ ու հոգսը այնքան չի սրտնեղում, որքան մանուկ սերունդի անկիրթ, անուսում մնալը։

Ապագան մեզ շատ դառն դասեր, շատ զղջումներ կարող է տալ, եթէ շարունակվի դարերից մեզ աւանդ մնացած անտարբերութիւնը։ Կրթական գործը իր նուրբ, իր ազնիւ նպատակն ունի. մարդկութիւնը կրթելու, բարձրացնելու համար անհրաժեշտ է անհատի աչքաբացութիւնը. չէ՞ որ 10 գիտնականի արածը, ստեղծածը՝ տգէտի մի հարուածով կոչնչանայ։ Աչքաբացութիւն բոլոր անհատներից է պահանջվում և պէտք է այդ զգալի պահանջը իրականացնել գիւղից սկսած, քանի որ տեսնում ենք այդ պակասը։

Ծաղկեցնել է հարկաւոր մեր դպրոցները, նրանք սիրտ և զգացմունք են կրթում մարդկութեան համար։ Սողոմոնեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Սարիղամիշ, 25 յուլիսի

Ամսիս 23-ին Կարսի հաշտարար դատարանը [illegible] նից մեր մերձակայ լեզգիաբնակ Վերին Սարիղամիշ գիւղում վերաբնակող Աբդուլ-Համիդ Իսաեվի և Սարիղամիշ աւանի բնակիչ Ե. Ս.-եանի գործը։

Աբդուլ-Համիդը, օգտվելով Ս.-եանցի նեղ կացութիւնից, նրան փոխարինաբար տուած 150 րուբլու փոխարէն վերցնում է 300 ր. պարտամուրհակ և որպէս գրաւական մի զոյգ ոսկէ ապարանջան 140—150 ր. արժողութեամբ։

Որովհետև նշանակված ժամանակամիջոցը լրանալուց յետոյ Ս.-եանցը իր պարտքը վճարել չէ կարողանում, Աբդուլ-Համիդը վաճառում է ապարանջանները և 300 ր. էլ առանձին պահանջ է ներկայացնում Կարսի հաշտարար դատարանին, որը դատարանական ծախքերով հանդերձ վճռվում է յօգուտ Իսաևի։ Սրա դէմ բողոքում է Ս.-եանը և ահա ամսիս 23-ի դատավարութեան ժամանակ վերջինիս ցոյց տուած վկաները հաշտարար դատարանում պարզում են գործի իսկական պատկերը։

Հաշտարար դատաւորը Ս.-եանցի բողոքը գտնելով օրինաւոր՝ Իսաևի պահանջը Ս.-եանից 300 ր. փոխարէն՝ վճռեց 150 ր. և այդ 150 րուբլուց 120 ր. վճարված համարեց գրաւ եղած ապարանջանների փոխարէն. նոյնպէս վճռեց բանտարկել Իսաևին չորս ամսով։ Իսաևը անմիջապէս ձերբակալվեց և միայն երաշխաւորութեամբ արձակվեց։ Գոթունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Ժամանակաւոր գլխաւոր-հրամանատար, ինֆանտերիայի գեներալ Ն. Պ. Շատիլօվը յուլիսի 27-ին ուղևորվել է Սարիղամիշ I կովկասեան զօրաբանակի մանեօվրներին ու գնդակաձգութեանը ներկայ լինելու համար։ Այնտեղից կը վերադառնայ յուլիսի 31-ին։

◆ Վաղը, չորեքշաբթի, տեղի կունենայ մելիօրացիական համագումարի կազմակերպիչ կօմիտէտի նիստը Կայսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում։ Նիստին կը մասնակցեն տեղական գիւղատնտեսական հիմնարկութիւնների ներկայացուցիչները և մելիօրացիայի գործով հետաքրքրվողները։ Նիստի վերջում տեղի կունենայ պրեզիդիումի ընտրութիւնը։ Պրեզիդիումը այնուհետև իր ձեռքը կառնի գործերի կանօնաւոր վարելը։

◆ Թիֆլիսի քաղ. դումայի անտեսական մասնաժողովը, քննելով բօրսայի տեղեկութիւնները ալիւրի և քաղ. սպանդանոցի ու անասնավաճառանոցի գների մասին, հիմք չը գտաւ պակասեցնելու հացի ու մսի սակագները։

◆ Թիֆլիս է եկել Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտ Ա. Ս. Շչէպօտիևը, որին երկրագործական մինիստրութեան կողմից յանձնարարված է կազմել Ռուսաստանի ընդհանուր շերամապահութեան տեղեկագիրը։ Երկու օր առաջ նա գնացել է Քութայիսի շրջանը շերամապահութեան հետ ծանօթանալու, որտեղից նա կը վերադառնայ և կը մնայ մի շաբաթից աւելի։

◆ Թիֆլիսի գրաքննական ատեանի կարգադրութեամբ յուլիսի 26-ին գրավել էր «Закавказье» թերթի № 169։

◆ Վերայի կամուրջի մօտ, որտեղից սկսվում է քաղաքային այգին տանող ճանապարհը, էլեկտրաքարշի դիրեկտորի կարգադրութեամբ դրված է կանգնեցնելու պայմանական սիւն, որի մօտ՝ երթեւեկողների պահանջով՝ պէտք է կանգնեցնեն էլեկտրաքարշ վագօնը։

◆ Ստացանք Իգօրինայա կայարանից՝ Ս. Եադուբեանից 3 ր. յօգուտ «Մշակի» № 158-ի մէջ յիշված շուշեցի օրիորդի։

◆ Թիֆլիսի I-ին առևտրական դպրոցում վերաքննութիւնները տեղի կունենան ռուսերէն լեզուից և թւաբանութիւնից օգոստոսի 20-ին և 21-ին, գերմաներէնից և բնական գիտութիւններից 22-ին և 23-ին, ֆրանսերէնից և պատմութիւնից՝ 24-ին, կրօնից և տեղական լեզուներից 26-ին. ընդունելութեան քննութիւնները պատրաստական 1-ին և 2-րդ դասարաններում բոլոր առարկաներից՝ 27-ին և 28-ին, իսկ մնացեալ դասարաններում՝ վերաքննութիւնների օրերին։ 4-րդ, 7-րդ և 8-րդ դասարաններում ընդունելութիւն չի լինելու։ Նախակրթարաններում ընդունվում են 7—9 տարեկան մանուկները առանց քննութեան։ Վերաքննութիւնները լինելու են առաւօտները ժամը $8^{1}/_{2}$-ից։ Պարապմունքները կը սկսվեն սեպտեմբերի 2-ից։

◆ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը թոյլատրել է Դերբենդ կայարանից մինչև Սալիան քաղաքը մօտ 300 վերստ տարածութեամբ, երկաթուղագիծ անցկացնելու համար հետազօտութիւններ կատարել։

◆ Օգոստոսի 6-ին, 7-ին և 8-ին թոյլատրված է «Մուշտայիդի» այգում զբօսանք կազմակերպել Թիֆլիսի ժողովրդական զուարճութիւնների ընկերութեան օգտին։

◆ Կովկասեան շերամապահական կայանի հրահանգիչները, աշխատանքները վերջացնելով, սկսել են վերադառնալ Թիֆլիս։ Սեպտեմբերի 1-ին կայանում կը սկսվի թիթեռների հետազօտութիւնը պեբրինի վերաբերմամբ՝ սերմեր պատրաստելու համար։

◆ Վերայի թաղամասում մսի ու հացի առևտրի վրա ժամանակաւորապէս հսկող Հայկ Խարազեանը ծառայողների նորմալ հանգիստը խախտելու համար արձանագրութիւն է կազմել Օլգինսկայա փողոցի վրա գինետուն ունեցող Ալ. Սուխարուլիձէի և Սերգէյ Փարաղանովի վրա, թէյատուն ունեցող Մաշադի Աբաս Ալի Մահմէդ Ալի-օղլիի և մրգեղէնի խանութպան Իւսուֆ Ալի Իսմայիլ-օղլիի վրա, հոտած միս գործածելու համար ճաշարանատէր Մաշադի Հիւսէյն Մուհարրամ-օղլիի վրա, Գէօրգի Մաչավարիանիի վրա՝ կնքված խանութում միս վաճառելու համար։ Կազմված են նաև վեց թոնրահաց վաճառողների վրա, որոնք 3-րդ տեսակի հացը սպառում են 2-րդ տեսակի փոխարէն։

◆ Յուլիսի 28-ին, երեկոյեան ժամը 8-ին, մօտորային վելօսիպեդով Գօլովինսկի պրօսպէկտով ճեպընթաց դէպի փոխարքայի պալատի կողմն էր գալիս Արտաշէս Դ. Մէյտարեանը, որ ապրում է Սուրբ-Նշանսկայա փողոցի № 12 տանը։ Վելօսիպեդիստը մի քանի անգամ ազդանշանը տալով հասաւ պալատի հանդէպ և կպաւ անցնող մի կնոջ։ Միաժամանակ ընկան երկուսն էլ՝ թէ կինը և թէ վելօսիպեդիստը։ Վերջինս ջարդուածքներ ստացաւ գլխից և շուտափոյթ օգնութեան կառքով ուղարկվեց իր բնակարանը։

◆ Կարսից յուլիսի 27-ին Տէր-Սաղաթէլեանը հեռագրում է մեզ. «Այսօր իշխանութեան ներկայացուցիչների, առևտրականների, քաղաքացիների, բանկի կառավարիչ Թամամշեանի և խորհրդի անդամ Քալանթարեանի ներկայութեամբ տեղի ունեցաւ Թիֆլիսի առևտրական բանկի Կարսի բաժանմունքի հանդիսաւոր բացումը։ Ուղղափառ և հայ-լուսաւորչական հոգևորականութիւնը մաղթանք կատարեց, որից յետոյ շնորհաւորական ճառեր արտասանեցին զինուորական նահանգապետի օգնական Հաշիմբէկօվը և բոլոր դասերի ներկայացուցիչները։ Ներկայ եղողները հիւրասիրվեցին բանկի կողմից»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յուլիսի 28-ի երեկոյեան ժ. 6-ին Բագուի նահանգի Գեօկչայի գաւառի Իվանովկա գիւղի բնակիչ 19 տարեկան կառապան Իվան Սէմեօնովիչ Սմիրնովը Դեմիդօնովսկայա հրապարակին մօտիկ Կուր գետում լողանալիս խեղդվել է։ Դիակը չեն գտել։

◆ Անյայտ կոչման մի մարդ յուլիսի 27-ի գիշերը արբած դրութեան մէջ Ֆունիկուլէրից ներքև Սօլօլակի զառիվայրից գլորվելով ընկել է ստորոտը և ստացել ջարդուածքներ։ Անզգայ դրութեան մէջ նրան տարել են Միքայէլեան հիւանդանոց և թողել բժշկվելու։

◆ Յուլիսի 27-ին, երեկոյեան ժ. 8-ին, Մուխրանեան փողոցով անցնելիս էլեքտրաքարշի № 95 վագօնը, որի վարիչն էր Սպիրիդոն Լոմիձէն և կոնդուկտորը Գրիգորի Պիլիեվը, № 25 տան հանդէպ կպչում է փողոցից անցնող Երևանի նահանգի Սուրմալուի գաւառի Համամլի գիւղացի 12 տարեկան Գրիգոր Կարապետեան Միրզոյեանցին, ու վայր գլորում։ Ընկնելուց ջարդուածքներ է ստացել Գրիգորը՝ ծնօտի վրա ու ձախ ձեռքից։ Վիրաւորվածին ուղարկել են Միքայէլեան հիւանդանոց, ուր նրա դրութիւնը գտել են ծանր, բայց անվտանգ։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թէհրանից հեռագրում են «Баку» լրագրին, «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը, ի նկատի առնելով պարսիկների մերժումը տալ հայերին մէջլիսում երեք պատգամաւորական տեղ, վճռեց բօյկօտ անել նոր մէջլիսի ընտրութեան դէմ։ Այդ վճռին չը հնազանդվելու համար կուսակցութիւնից հեռացվում են նախկին պատգամաւոր Միրզայեանը և Քեռին, Եփրեմի յայտնի համհարզը»։

◆ Մօտ ժամանակներս Նորվէգիական Բերգէն նաւահանգիստը մտաւ անգլիական տուրիստական «Մանտուա» շոգենաւը և խարիսխ ձգեց։ Քիչ ժամանակից յետոյ այնտեղ եկան նոյնպէս գերմանական չորս զրահանաւեր։ Նաւահանգստի վարչութիւնը պահանջեց, որպէսզի «Մանտուան» իր տեղը զիջի զրահանաւերից մէկին։ Իմանալով այդ մասին, զրահանաւերի հրամանատար գերմանական ծովապետը շտապեց «Մանտուայի» կապիտանին իր ցաւակցութիւնը յայտնել։ Բայց կապիտանը յայտնեց, որ ոչ մի ներողութիւն ընդունել չէ կարող, որովհետև վիրաւորանքի են ենթարկվել ոչ թէ ինքը կամ իր նաւը, այլ բրիտանական դրօշակը։

◆ Պարիզում լուր է տարածվել, որ Բուլղարիան պատերազմ է յայտարարել Թիւրքիային։

◆ Բուխարեստի հաշտութեան դաշնագրի մէջ, ինչպէս խօսում են, մտցրված է մի գաղտնի յօդուած, որով դաշինք կապող պետութիւնները պայմանաւորվում են իրար պաշտպանելու։

◆ Յոյները 3000 զինուոր են իջեցրել Սանտի-Կվարանտայում ապստամբված ալբանների դէմ գործելու նպատակով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

27 յուլիսի

ՊԱՐԻԶ։ Պաստէրեան ինստիտուտի 25-ամեայ հիմնադրութեան առիթով ինստիտուտի դիրեկտորի օգնական Մէչնիկովը պարգևատրվում է Պատուոյ Լեգէօնի խաչով։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների պալատը 210 ձայնով ընդդէմ 138-ի ընդունեց նոր Մարկօնի ընկերութեան հետ կապած պայմանագիրը անթել հեռագրի կայարանների սիստեմը կազմակերպելու ամբողջ Մեծ-Բրիտանիայում։ Պայմանագիրը քննութեան ենթարկելիս մասնաւոր արվեց կայարանների կառուցանելու կարևորութիւնը ռազմական տեսակէտից։

ԷՍՍԵՆՏՈՒԿԻ։ Եկաւ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը։

ՎԻԵՆՆԱ։ Մանրէաբանական հետազօտութիւնը հաստատել է խօլերայից մեռնելու դէպքը Կատտարօյում։

ՄՕՍԿՎԱ։ Արգելք է դրված «Рус. Вѣд.» լրագրի № 173-ի վրա։ Դատ է յարուցված։

ՏՕԿԻՕ։ Կառավարութիւնը ձեռնարկել է պարզելու այն միջոցները, որ կրել են ճապոնացիները Չինաստանում վերջին անկարգութիւնների միջոցին։

28 յուլիսի

ՄԻՆՍԿ։ Դատաստանական պատասխանատուութեան են ենթարկվում Մինսկի մէշչանական վարչութեան նախագահ Պրիտուլեցկին և գործավար Զամըկօն զինուորական ծառայութիւնից ազատելու նպատակով փաստաթղթերի մէջ կեղծիք կատարելու համար։

ԱԹԷՆՔ։ Վիլհէլմ կայսրը Կօնստանդին թագաւորին նշանակել է գերմանական զօրքի ֆելդմարշալ։

ԽԱՐԲԻՆ։ Տեղս հասաւ վէլօսիպեդիստ Պանկրատօվը, որ 2 տարի և 18 օրվայ մէջ ճանապարհորդել է աշխարհի շուրջը, Բեռլինի միջազգային սպօրտի համագումարի սահմանած համաշխարհային մրցանակը՝ բրիլլիանտէ աստղը շահելով։

ԿԻԵՎ։ Աւարտվում է մօտ 5 տարի շարունակվող մի շարք անձանց գործի քննութիւնը, որոնք բիւրօ էին կազմել զինուորակոչներին զինուորական ծառայութիւնից ազատելու նպատակով։ Պատասխանատւութեան են ենթարկվում զինուորական ծառայութիւնից խուսափած մի քանի հարիւր հոգի։

ԲԵՌԼԻՆ։ Բրիւկկէում թռիչք կատարելու միջոցին օդաչու Բօզելերը և նրան աշակերտող Ստեֆանը ընկան ու մեռան։

ՕՄՍԿ։ Տիւմէն-Օմսկի երկաթուղագծի վրա, Դրագունսկայա և Լիւբինսկայա կայարանների միջև, կողոպտված է մի արտելշչիկ, որից տարել են 16,000 ր.։ Ջարդարարները, թւով չորս հոգի, թագնվել են անտառում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԹԻՖԼԻՍԻ ՃԻՒՂԸ

Արժեթղթերի կուրսերը

29 յուլիսի

I կ. ներք. փոխ. խ. տոմ.	483 ր. — կ.
II » »	352 ր. — կ.
III Ազնուակ. բանկ. »	314 ր. — կ.
4% Պետական րենտա	93 ր. — կ.
5% Արտաք. փոխառ. 1906 թ.	102 ր. 50 կ.
5% Ներքին » 1905 » I հրատ.	104 ր. 75 կ.
5% » » II հրատ.	101 ր. 75 կ.
5% Պետ. Ազնւ. բանկ. գր. թ.	99 ր. 87½ կ.
4½ » » » »	90 ր. 50 կ.
4% » » » »	89 ր. — կ.
3½% » » » »	82 ր. 75 կ.
5% Գիւղ. հող. բան. վկ.	100 ր. — կ.
4½% » » » »	90 ր. 50 կ
4% » » » »	90 ր. 12½ կ.
5% Արտաք. փոխառ. 1908 թ.	105 ր. 25 կ.

Օտարերկրեայ դրամների կուրսը

Լօնդօն 10 ֆ. ստեր.	95 ր. 25 կ.
Բեռլին 100 մարկ	46 ր. 55 կ.
Պարիզ 100 ֆրանկ	37 ր. 73 կ.
Թաւրիզ 10 ղրան	1 ր. 73 կ.
Կ. Պօլիս 1 լիրա	8 ր. 65 կ.

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐ

Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

(Գոյութիւն ունի 1895 թ.)

Հեղինակ առևտրական հաշւապահութեան ձեռնարկի և զանազան մասնագիտական ձեռնարկների։

Տալիս է երկու սեռի անձանց մասնագիտական առևտրական գիտութիւն 4-ամսեայ դասընթացքում, ամենօրեայ պարապմունքներով։

Դասընթացքներում անցնում են.—Առևտրական և արդիւնաբերութեան զանազան ճիւղերի հաշւապահութիւն, նաւթարդիւնաբերութեան և նաւթագործութեան ճիւղի հետ միասին, զանազան մեթօդներով, կատարեալ իւրացումն կրկնակի իտալական սիստեմով և առևտր. թւաբանութիւն, առևտր. նամակագրութիւն, մուրհակային և առևտրական իրաւունքներ, քաղաքատնտեսութիւն, վատ ձեռագրի ուղղումն։

Ոչ պարտադիր առարկաներն են՝ 1) Օտար լեզուներ, 2) Ստենօգրաֆիա (սղագրութիւն) և 3) Ռեմինգտոնի վրա գրել։

Ուսուցիչները բարձր կրթութիւն ստացած մասնագէտներ են, որոնք գործնականապէս և տեսականապէս պատրաստված են ամեն մի առարկայի համար առանձին։

Վկայագրերը տրվում են մինիստրութեան թոյլտուութեամբ։

Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1913 թ.։ Խնդրագիրների ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—11-ը, երեկոյեան 5—7-ը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Դասընթացքներին կից հաստատված են քիչ պատրաստված անձանց համար առանձին պատրաստողական և լրացուցիչ դասարաններ ռուսաց լեզուի և թւաբանութեան համար։

Անձամբ և նամակներով դիմել՝ Тифлисъ, Учредит. Бухг. Курсовъ Н. В. Абраамяну, Николаевская, 22, Телефонъ 7—44

(կ. հ. ե) 576. 0-4

Մեր պահեստի գեղարուեստ. բացիկների շրջանառութիւնը աւելի ընդարձակելու համար մենք ուղարկում ենք ձրիաբար մի շատ ընտիր ալբոմ գեղարուեստ. 300 հատ բացիկներով կամ թէ վճարում ենք ալբոմի փոխարէն,

ՏԱՍՆԵՒՀԻՆԳ ՌՈՒԲԼԻ ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄ

նրան, ով ուղիղ կերպով կը լուծէ ստորև բերված խնդիրը և կը պատուիրէ մեզ մօտ 25 հատից ոչ պակաս գեղարուեստ. բացիկներ՝ ուղարկելով 85 կ., կամ թէ վերադիր վճարով՝ 95 կ.։

?

4		
	5	
		6

?

Քառակուսի 9 վանդակներում 1—9 թւանշանները պիտի զետեղել այնպէս, որ իւրաքանչիւր ուղիղ գծի (3 վանդակի) գումարը լինի 15, և որ այդ գումարը կրկնվի. ըստ կարելոյն, աւելի շատ անգամ։ Խնդիրը լուծելու իրաւունքը պատկանում է նրան, ով մեզ մօտ պատուիրած և վճարած ունի 25 հատ բացիկների համար։ Որովհետև իւրաքանչիւր անձ, ով ուղիղ կերպով վճռած ունի խնդիրը, ստանում է պրէմիա, հետևաբար՝ դիմում անելուց պիտի յայտնել, թէ որ պրէմիան է ցանկանում—ալբոմը թէ դրամը, նոյնպէս և նամակի մէջ նշանակել, առանձին բարակ թղթի մի փոքրիկ կտորի վրա, ճշգրիտ հասցէն։

(Л. 12951) О-ВО «УНИВЕРСАЛЬ», ЛОДЗЬ С. 27. 10-1

Թիֆլիսի I Առևտրական Դպրոցի Վերատեսուչը

յայտարարում է, որ վերաքննութիւնները տեղի կունենան օգոստոսի

20-ին—Ռուսաց լեզու (գրաւոր) 4, 5, 6 և 7-րդ դաս., թւաբանութիւն՝ պատրաստական, 1, 2 և 3-րդ դաս.։
21-ին—Ռուսաց լեզու (բանաւոր) 1, 2, 3, 4, 5, 6 և 7-րդ դաս., մաթեմատիկա՝ 3, 4, 5, 6 և 7-րդ դաս.։
22-ին—Գերմաներէն՝ 1, 2, 3 և 4-րդ դաս., ռուսաց լեզու՝ պատրաստ. դաս.։
23-ին—Գերմաներէն, 5, 6 և 7-րդ դաս., աշխարհագրութիւն, բնագիտութիւն, ֆիզիկա՝ բոլոր դասարաններում։
24-ին—Ֆրանսերէն՝ 2, 3, 4, 5, 6 և 7-րդ դաս., պատմութիւն՝ բոլոր դաս.։
26-ին—Կրօն՝ բոլոր դասարաններում, տեղական լեզուներ՝ բոլոր դասար., մանկավարժական առարկ.՝ 5, 6 և 7-րդ դաս., գծագրութիւն՝ 6-րդ դաս.։

Ընդունելութեան քննութիւնները՝ պատրաստական, 1 և 2-րդ դաս. մտնելու համար՝ տեղի կունենան բոլոր առարկաներից օգոստոսի 27-ին և 28-ին, իսկ միւս դասարանները մտնելու համար՝ վերաքննութիւնների օրերը։ 4-րդ, 7-րդ և 8-րդ դասար. ընդունելութիւններ չեն լինի։ Պատրաստական դաս. ստորին (այբուբենական) բաժանմունքը մտնելու համար ընդունվում են 7—9 տար. երեխաներ առանց քննութեան։

Այն աշակերտները, որոնք առանց յարգելի պատճառի որոշված օրերը չեն ներկայանայ վերաքննութիւններին, այլևս իրաւունք չեն ունենայ քննութեան ենթարկվելու։

Քննութիւնների սկիզբը առաւօտեան ժամը $8^{1}/_{2}$-ից։ Մաղթանքը և պարապմունքները [illegible] սեպտեմբերի 2-ին, [illegible] ժամը $8^{1}/_{2}$-ին.

(կ.ե.) 591. 3-3

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻԼՈՍԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.

Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ռէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ռեմինգտոն և այլ. և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և դաս-դաս։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առևտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 284 ունկնդիր, որոնցից 51 հոգի իգական սեռից)։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՈՍԵԱՆ

(ե. հ. կ.) 556. 0-9



ՊԱԼԱՍ-ՀՕՏԵԼ

ԼՕՁ

Նորագոյն առաջնակարգ հիւրանոց

150 շքեղ կահաւորված համարներ

1 ր. 50 կ-ից սկսած

Առանձին ուշադրութիւն է դարձված օրինակելի մաքրութիւն, անդորրութիւն և կարգ ու կանոն պահպանելու վրա։

(ե.շ.) (Л. 12046) 8—8

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

յայտարարում է ի գիտութիւն ճանապարհորդների և ապրանք ուղարկողների, որ Ընկերութեան շոգենաւ «ՄԵԴԻ» (Նաւապետ Բուլլ) մեկնում է Բաթումից Մարսէյլ, հանդիպելով Տրապիզոն, Սամսոն և Կ. Պօլիս

Հինգշաբթի, օգոստոսի 1-ին (օգոստոսի 14-ին 1913 թ. ն. տ.)

Տեղեկութիւնների համար խնդրում են դիմել Ընկ. Թիֆլիսի գործակալ պ. Ս. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆԻՆ, իր գրասենեակում, որ գտնվում է Արմեանսկի բազարում՝ Գօստինի դվոր Մանթաշեանների։ Հեռախօս № 7—21.

602. 1—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՍՍԱԺԻ ԴՊՐՈՑ ու բժշկական մարմնամարզ. Մ. Ի. ԿՈՒԼԱԿՕՎԱՅԻ.

կօսմէտիկայի դասընթացք. երկու սեռի համար։ Պարապմունքների սկիզբը սեպտ. 15-ից։ Կուրսը 8 ամիս։ Ֆէլդշէրների և ֆէլդշէրուհիների համար 4 ամիս։ Խնդիրների ընդունել. մինչև սեպտ. 10-ը։ С.-Петербургъ, Серпуховская ул. 7. (ե.) (П. 101702) 3—3

ԴՈԿՏՕՐ

Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆԸ

ԲԵՌԼԻՆՈՒՄ

Շարունակում է ընդունել ամեն տեսակ հիւանդների և խորհրդակցութիւններ է կազմում պրօֆեսօրների հետ։ Նոր հասցէն՝ Berlin N. W. Luisenstr. 67. Telephon Amt. Norden. 92—74.

(ե. ու.) 412. 20—20

Կ. Հ. Հրատարակչ. Ընկ.

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ա) «ՈՍԿԷ ԱՂՋԻԿ» մանկական պատկերազ. հէքիաթ. ռուս. թարգմ. Լ. Մելիք-Ադամեան, գինն է 7 կ., բ) «ԱԿ-ԲՕՋԱՏ» մանկական պատկերազ. հէքիաթ Մ. Սիբիրեակի, թարգմ. Ս. Թորոսեանի, գինն է 15 կ., գ) «ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ՄԱՐՏԻՐՈՍԸ» ժողովրդ. գրադարանի № 3 գրք. Ս. Մ. Շահնազարեանցի գինն է 7 կ.։ Դիմել՝ գրախանութներին, Ընկ. ճիւղերին, աշխ. անդամներին, գործակալներին և հայաբնակ վայրերի ՄԱՆՐ ՎԱՃԱՌ ԸՆԿ.։ Պահեստը Ընկ. մօտ՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательское О-щ. Бебутовская № 25. 597. 2—2

Լոյս տեսաւ և վաճառվում է բոլոր գրավաճառանոցներում

ԱՐԱՄԱՅԻՍ

Գաղափարի ճանապարհին

Գինը 1 ր. 25 կ. առանց ճանապարհածախքի (ճանապարհածախքով 1 ր. 50 կ.)։ Պահեստը Թիֆլիս, «ԳԻՐ» գրավաճառանոցում. Тифлисъ, книж. маг. «ГИРЪ».

(ու.կ.ե.հ.) 590. 5—4

ՕԳՏՎԵՑԷՔ ԴԻՊՔԻՑ

Վաճառվում են Յ. Դաղբաշեանի բառարանների ՎԵՐՋԻՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

ՌՈՒՍ-ՀԱՅ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ գինը 8 ր., կազմած 9 ր.։ ՀԱՅ-ՌՈՒՍ ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌ., գինը 6 ր., կազմած 6 ր. 50 կ.։ Երկու բառարանները միասին 12 ր.։ Ճանապարհածախսը հեղինակի վրա։ Աշխարհաբառի քննական քերականութիւնը նոյն հեղինակի, գինը 50 կոպէկ։ Դիմել՝ А. Дагбашяну. Коргановская ул. № 9. кв. 2 Въ г. Тифлисъ.

(ե.) 494. 10—5

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ինստիտուտաւարտ կամ գիմնազիստաւարտ

վարժուհի-դաստ.-կչուհի,

ոչ պակաս քան 30 տարեկան, որը պարապելու է ու դաստիարակելու գիմնազիայի 3-րդ դասատան մի աշակերտուհու, և որին միանգամայն պէտք է առնէ իր անմիջական հսկողութեան տակ։ Բացի հիմնական դաստիարակութիւնից պահանջվում է իմանալ ֆրանսերէնը և դաշնամուրի վրա նուագելը։ Տրվելու է ճաշ, բնակարան իր բոլոր յարմարութիւններով։ Պայմանների համար դիմել Чарджуй, М. И. Даніелянцу.

(ե.ու.) 600. 3—1

Հայ օրիորդ նկարչուհի,

որ ապրում է ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ, ուզում է դասեր տալ Կովկասի կամ ուրիշ տեղերի հայ դպրոցներում։ Դասեր՝ նկարչութեան, կար ու ձևի և դաշնակի։ Դիմել Նոր-Նախիջևան, դ-ր Ե. Բեդելեանին։ Нахичеванъ н/Дону. д-ру І. Л. Бедельяну.

(օ.մ.) 591. 3—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный